

ԱՐՄԵՆԻԱ
ԵՐԱՎԵԱԾ

ՏԵՍՐ ԹԱՏԵՐԱԿԱՆ

ՑԵՅՐՈՒ Ֆ

ՀԵՎԴՈՒՆԻ ԵՎ ԵՅՈՐԻՆ

Ա. Հ. ՌԻՋՄԵՐԵԱՆ



ԿՈՍՏԵՔՆՈՒԳՈԼԻ

Ե ՏՊԱՐԱՆԻ Յ. ՓԱՓԱՋԱՆ

1858

1. 2. 3. 4. 5. 6. 7. 8. 9. 10.

11. 12. 13. 14. 15. 16. 17. 18. 19. 20.

21. 22. 23. 24. 25.

26. 27. 28. 29. 30.

31. 32. 33. 34. 35. 36. 37. 38. 39. 40.

41. 42. 43. 44. 45. 46. 47. 48. 49. 50.

51. 52. 53. 54. 55. 56. 57. 58. 59. 60.

61. 62. 63. 64. 65. 66. 67. 68. 69. 70.

71. 72. 73. 74. 75. 76. 77. 78. 79. 80.

ԱՆԳԵՐՁ
ԱՅ ԷՄՐԿՔՄՐԱ

ԱԶԳԱԾՄԵՔ ԵՒ ՄԵՇԱԳԻՈՅ ՏԵՔ

Ու այնչափ երկարաբանութեամբ՝ որչափ որ կատարեալ
անկեղծութեամբ կը յայտնեմ սրտիս դէպ ՚ի Զերդ Ազգա-
սիրութիւն զգացած երախտագիտութիւնը . որն որ յառաջ ե-
կաւ Զեր այս անդամ ինձ պէս մէկու մը ըրած օգնութեամ-
բը : Այս, Տէր իմ, գիտցիք, որ զիս բաւական մխիթարե-
ցիք ձեռնտու ըլլալով ինձ ՊԼԻՄՊԻՍԴԻ ողբերգութիւնս
հրատարակելու . որուն բարոյականը գլխաւորապէս յայտնել է
ամենուն ,

Կախ՝ թէ ի՞նչ է թագաւորի մը պարտականութիւնը .
Երկրորդ՝ ի՞նչ է հաղարտ և անձնասէր թագաւորի մը հա-
սուցած չարիբը .

Երրրորդ՝ ցուցընել ամենուն այն հրէշը որն որ պատճառ
եղաւ մեր այրինեաց թշուառութեանը :

Ա՛ Ազգասէր Տէր իմ, ներեցէք ինծի հրապարակաւ քարո-
զելու սա ճշմարտութիւնը, թէ Ազգասիրութիւնն է միայն այն
ճշմարիտ հարստութիւնը՝ որով ամեն մարդ կրնայ իրաւամբ
պարծենալ . և չէ թէ Աշխարհային հարստութիւնը, ներկայ
դարուս քաղաքավարական ձեւը և կամ ուսումնականու-
թիւնը . չէ . Տէր իմ, ընչից հարստութեամբ միայն չիկրնար
մէկը Երկնից հաճոյ գործ մը ընել, և ոչ ալ լոկ ուսումնակա-
նութեամբ . բայց Ազգասիրութեամբ Ահա այս է գրեթէ

այն մէկ հատիկ միջոցը՝ որով կրնանք ընել այն ամեն գործերը,
և խօսիլ այն ամեն ճշմարտութիւնները՝ որոնք երկելի օգուտ-
ներ կրնան ընծայել Ազգերնուաս : Ի՞այց աւաղ . . . որ Աշ-
խարհս գրեթէ չինայիր այնպիսիներուն վրայ՝ որոնք աղդային
ոիրոյ կրակով վառեալ շարունակ կ'ուղեն աշխատիլ իրենց
Ազգին համար . և սոսկալի ևս է ըսելը, որ կ'անարգուին և
կը հարստահարուին ալ . . .

Խօսէ՛ աղատ, գործէ՛ աղատ,
Ո՛ աղդասէր գու հոգի,
Քու պաշտպանդ է Երկինք վերին .
Երիացի՛ր, Վատիկ մի՛ :

Այսո՛, թող ամեն Ազգասէր անձինք իրենց աչուլներնին
յերկինս ուղղեն, և թող վստահին, թէ օր մը պիտի վարձառ-
րուին անշուշտ :

Թառղ ամեն աղդուրաց անձինք վստահին, որ օր մը պիտի
հասնի իրենց վրայ Ամենակարողին բարկութեան կայծակները:
Կերէ՛ թող իմ Ազգասէր Տէրս անարժան գրութեանս
պակասութիւններուն . վստահանալով՝

Որ ես պիտի մնամ իր Ազգնուութեանը
միշտ երախտագէտ

Ամենախոնարհ ծառայ

ԱՐՄԵՆԱԿԱՆ ՀՅ ԺԻԶՄԵՇԵՐԵԱՆ

1858. ՍԵՊ 3

ԱՆԱ. Յ. ԱՐԴՅՈՒՆ. Վ. Ա. Ա.

ՈՂԲԵՐՔՈՒԹԻՒՆ

ՏԵՐԻՍ ԱՐԱՐՈՒԱԾՍ

ՅՈՐԻՆԵԱՑ

Ա. Հ. ՌԻԶՄԻՋԵԱՆ

1858

ԱՆՁԻՆՔ

ԱՐՃԱԿ. Խմադաւոր Հայոց

ՄԵԾՆ ՆԵՐՍԻ Ծ. Ընդհանուր կաթուղիկոս Հայաստանեաց

ԱՆԴՈՎԱԿ. Փառանձեմի Հայրը

ՎԱՐԴԱՆ. Օմակիր Արշակաց

ՈՂԻՄ ՊԻՍՏԱ. Արշակաց Ե. Կինը

ՓԱՌԱՆՉԵՄ. " Բ. "

ՀԵՂԻՆԵ. Ողևակիաղաի խնամածուն

ՊԱՇՏՈՆԱԿԱԼՔ. ՊԱՀԱՊԱՆՔ. և այլն

Տեսարանը Արշակաց պալատին մէջ:

Ողբերգութեանս թէ՛ թարգմանութեան և թէ՛ ներ-
կայացման իրաւունքը Տեղինակը իրեն կը պահէ:

ԱՐԱՐՈՒՄԸ ԱՌԱՋԻՆ

ՏԵՍԱԲԱՆ Ը

Արշակուաց պալատին ներին շվելալարդ սրահը . Երիս իւրէ բարձրէննեայ մէներ՝ սրոնց ամեն մէխուն առջեւը նախնէ Հայկաղեան Շահաւորոց այսանները կանքնուած են . աւաստանին իորը աւանուած ասկէյոյլ էրան երիս իորմը երիս պահապահներ չը տեսնուին : Արածին մէջ աւելը քառաւոր սեղան մը . Քրան ոսկեթել ժողովով և կարգի մէրաբուստ սիսոց մը . սեղանին վրայ դրուած են արդունական ձերանին, նախը, և գաւառալանը . և այն : Այլանին երիս դրուած և չշուսիրեայ եօննասորին գանը . ամեն մէկ աստիճանին երիս իորմերը մէկ մէկ արժեց արյաններ : Այլանին երիս իորմը ուրեմն երիս քառաւոր սեղաններ դրուած են . սրոնց աջ հողմինին վրայ . Արշականուած իը աւանուի՝ արմուիը սեղանին իրմնցուցած և յերեւը ժակարտն վրայ :

ԱՐՃԱԿ

(Երիս վայրէնի լոտ անշրջ և անիօս ինաւլին վերջը՝ որուի եւ լուսը) Ե՛ս, թագաւորները անգամ ազատ չե՞ն գժբաղդութեանց ձիրաններէն . . . ի՞նչ է արդեօք թագաւորի մը ու հապատակի մը մէջ եղած տարբերութիւնը . . . Երկնից անկանոն վճիռներէն մէկն ալ սա է, թէ ո՞չ ոք իւր բոլոր բաղձանացը պիտի հասնի : Ա՛ անտանելի գերութիւն . յափտեան աւաղ մարդկային սեռին՝ որ այսպիսի բռնաւորական լուծի մը տակ կը ճնշուի : Այսո՛, երբոր լեռներուն խորին քարայրները թշուառ լեռնաբնակներուն հառաջանաց արձագանդը կուտան, թագաւորաց շքեղ պալատները նոյն արձագանդին ձայնը կը կրկնեն : Գիւղացւոյ մը իր հազար ու մէկ թշուառութեանցը վրայ ունեցած սրտին զգացումը ոչինչ կը սեպուի այն զգացմանը հետ բաղդատելով՝ զոր միահեծան թա-

գաւորի մը սիրտը կ'ունենայ իր մէկ փոքրիկ անհանգստութեա-
նը վըայօք : Իարձրասիրտ և ինծի պէս հպարտ Արշակի մը
համար անանկ զարչութելի պատիմ մըն է արքունական գահը
ելելը՝ որ ո՛չ իսկ Տարտարոսին խոր մժութեանը մէջ տիրա-
պետող ճիւաղաց իշխանը կընայ տալ իր ճանկերուն տակ ին-
կած հոգւյ մը : Հազար երանի պիտի ըլլար ինձ, թէ որ
բնաւ ծնած չ'ըլլայի, կամ թէ ասանկ սիրտ մը ըռնենայի, ո-
րուն արդինքը անպատճառ պիտի ծանրանայ օր մը Հայաս-
տանի վըայ : Ո՞ անիծեալ վատութիւն, ո՞ աննկարագրելի
անկարողութիւն, որովհետեւ կարող չեմ սրտիս ապերասանու-
թիւնը սանձելու . . . ա՛հ. վայ քեզ Հայաստան : որ այսչափ
թագաւորաց և ո՛չ մէկուն նմանութիւն ունեցող թագաւոր մը
Կիշխէ հիմա քու վըադ : Ո՞ այ քեզ Հայաստան, ինչու որ
այս սրտիս հպարտութիւնը վերջապէս պիտի բերէ քու վըադ
այն քստիմելի թշուառութեանց տեսարանը . և նցն սարսափե-
լի ժամանակին մէջ Արքին անդամ պիտի ծածկէ իւր երե-
սը : Արշակ ո՛չ մէկու մը կընայ անսալ կամ խոնարհիլ, և
իրեն այս յատկութիւնը շատ անմեղներ պիտի դահավիմէ ա-
րենալից անդունդին մէջ : Այսո՛, այս սիրտը պատճառ պի-
տի ըլլայ բոլոր Հայաստանի տակն ու վըայ ըլլալուն, և անոր
աւերակաց աղետալի տեսարանով համայն տիեզերաց սոսկումն
պատճառելու : Այսո՛, այս սիրտը պատճառ պիտի ըլլայ այն
օրուան շուտ հասնելուն՝ երբ բողոք Հայաստան վայնասունով
պիտի լեցուի : և այն օրուան վայնասունին գոռումը պիտի
թնդացունէ լիոները 'ի հիմանց . . . գորովագութ մայրեր զԱր-
շակ անիծելով պիտի կնքեն իրենց վերջին շունք, ձգելով ի-
րենց մանկունքը անպաշտպան, և փչելու հոգինին իրենց մօրը
դիակներուն վըայ . . . ո՞վ սարսափելի խոր հուրդ . . . թող պատ-
րաստուին Հայաստանի քաղաքները քիչ ժամանակէն իրենց
աւերակները ներկայացնելու ճամբորդաց, և գերեզմաններու
յատակներէն ելող ուրուականներէն աւելի սարսափ պատճա-
ռելու անոնց : Ուող պատրաստուին նաև պատմիչք՝ վատա-

Համբաւ, անօրէն, բարբարոս և ոչ — հայ ստորագրելու զԱր-
շակ և դատապարտելու զայն յաւիտենական անիծից : Ուող
այն ժամանակը դանուած Հայկազեան սեռին մնացորդը կրկնէ
անոնց վճիռը, և թող չելիչէ երբէք Արշակայ անունը առանց
անէծք մը կարդալու . . . (Աը նորէ և Ա արդան իւ ժոնէ)

ՏԵՍԱԲԱՆԻ

ԱՐԴԱԿ ԵՎ ՎԱՐԴԱԿ

ՎԱՐԴԱԿ

(Արշակայ անհանդապութիւնը նշանաւութեան հազունդ :) Ե՛ւչ վիճակ . . . վե-
հազունդ :

ԱՐՃԱԿ

(Արտէ Գրայ Ելեւութեան համար :) Ա արդան :

ՎԱՐԴԱԿ

ՏԵՇ ԻՄ :

ԱՐՃԱԿ

Աը սիրեմ զքել, Ա արդան, քու հաւատարմութեանդ
համար, բայց կատեմ հնազանդութեանդ պատճառաւ :

ՎԱՐԴԱԿ

Կերեցէք, ՏԵՇ իմ, ձեր անսուլոր խօսուածքը զիս զար-
մացմամբ և շուարմամբ կը լեցունէ : Ուող ներէ իմ թա-
գաւորս իր ծառային, թէ որ երբէք անհնազանդ դանուած
է. լաւ դիտէ Արշակ իւր Ա արդան ծառային հաւատարմու-
թիւնը, և անիկայ իր երկարատեւ ծառայութեամբը յայտնած
է իր թագաւորին, թէ ոչինչ կրնայ զինքը այնափ երջանկա-

ցընել, որչափ որ ամենայն հաւատարմութեամբ և կատարեալ հնաղանդութեամբ՝ ի գործ դնել ի՞նչ որ իրեն կը հրամայ- սի։ Այնուշամաս Վանելայ կենաց դադարումը Ա արդանին հնաղանդութեան արդասիքն էր . . .

Ա Ր Ճ Ա Կ

Աեցի՛ր . ահա՛ նոյն իսկ քու կատարեալ հնաղանդութիւնդ կատիակ զիս, որ զքեղ ատեմ. հնաղանդութիւնը չէ՛ թէ կու- րօրէն՝ այլ հրամայուած գործին նայելով պէտք է կատարուի. առաջ թէ ոչ այնպիսի հնաղանդութիւնը շողաքորթութիւն կը սեպուի։ Ի՞նչ է արդեօք թագաւոր մը. եթէ ոչ թագաւո- րաց թագաւորին մէկ ծառան։ Այո՛, թագաւոր մը ուրիշ բան չէ, բայց միայն վերին՝ Ա ախախնամութեան սողասաւոր- ներէն մէկը՝ որուն յանձնուած է խումբ մը ժողովուրդ։ Ժաշ- գաւորի մը գլխաւոր պարտականութիւնն է իրեն յանձնուած ժողովուրդեան երջանկութեանը համար աշխատիլ, ու չէ թէ ի- րեն . . . հաղար վայ այն ժողովուրդին՝ որ Արշակայ նման փա- ռամոլ և անձնասէր թագաւորի մը պաշտպանութեանը յանձ- նուած է. և բիւր վայ այն թագաւորին՝ որ իր պարտակա- նութիւնը չիձանցնալով պատճառ կ'ըլլայ անթիւ անմաշ՝ էա- կաց թշուառութեանը . . . Յառաջ եկո՛ւր, Ա արդան, և դադ- րեցո՛ւր երկիւղդ. մ' կասկածիր այն վատահութեանը վրայ՝ զոր ունի Արշակ քու վրադ։ Լուէ ինձ, Ա արդան, և ինա- ցի՛ր, թէ Արշակ այնպիսի կերպով շղթայակապ գերի մը ե- ղած է իւր սրտին՝ որ բնաւ չիկրնար կառավարել զինքը ըստ օրինաց Արարջին, և ըստ պահանջման մարդկային պարտակա- նութեան։ Ահա՛ այս է քու թագաւորիդ խզճալի վիճակը, որուն մէկ խօսքը, մէկ հրամանը քարացցց քու սիրտ զՎանել սպաննելու . . . մ' զարմանար իմ խօսուածքիս վրայ. և մի՛ կարծեր, որ ուրիշ ատեն այսպիսի պարագայի մը տակ ուրիշ ընթացք պիտի կարենամ բռնել։ Դիացի՛ր, որ գեր շատ ու- րիշ անմեղներուն մահուան վճիռը պիտի լսես իմ բերնէս և կատարես . . . անիծեալ սիրտ . . . (ինայ ուսուէ ճը վրայ)

Ա Ա Ր Դ Ա Կ

(Ո՞է ի՞ո՞ւ) Ի՞նչ խօսիմ արդեք, զարհութելի՛ վիճակ :
(բացի) Ա եշազուն տէ՛ր, հեռացուցէ՛ք այդպիսի ունայն մտա-
տանջութիւնները . և իր ամենազօրաւոր իշխան՝ կոտրեցէ՛ք այդ
մտաց անհանգստութիւն պատճառող անտեղի խորհուրդներուն
շղթայները : Ասոնց փոխանակ՝ նախարարներուն հանած խռովու-
թեանը դարձան մը աանիլ մտածելու է :

Ա Բ Շ Ա Կ

(Տէ՛ն շատրւլով) Օ անոնք ամենիքը կոտրտելէն և ջնջելէն
՚ի զատ ուրիշ ի՞նչ դարձան կայ . . . Այո՛, Ա արդան, զի-
շերուան լուրթիւնը խանգարող քաղցրաձայն սոխակն անդամ
վերցընելու է մէջէն :

Ա Ա Ր Դ Ա Կ

Իմ թագաւորս թող մտածէ՛ անդամ մը, թէ զանոնք լուր-
ցընելու համար՝ մահուանէ ՚ի զատ ուրիշ միջոց չիդանուիր .
(Պաշտօնակալ ճշ իւ ճշնէ յեւուը նամակ օը, զրէն որ Արշակայ իսու-
սայ ու իւբենայ)

Ա Բ Շ Ա Կ

(Կամակալ առնելով և բանալով) Կերսէսէն :

Ա Ա Ր Դ Ա Կ

Կերսէսէն . . .

Ա Բ Շ Ա Կ

(Կամակալ աբուլով) Այո՛, Կերսէսէն : Զեմ գիտեր, թէ
զինքը ի՞նչ բանի տեղ դրած է . իր բռնած այս ընթացքը

կը զայրացընէ զիս . ո՞լ է “Աերսէս , որ զիս” յանդիմանէ .
միթէ Արշակ պիտի խնարհի՞ իրեն պէս անպիտան մէկու մը :
Առ , Ա արդան , սա նամակը , և շուտով գնա՛ ըսէ՛ “Աերսէ-
սի , որ անգամ մըն ալ ասանկ յանդգնութիւն չընէ , ապա
թէ ոչ Արշակայ բարկութեան կայծակներովը անպատճառ պի-
տի շանթահար ըլլայ . . . (Ա արդան իւ Արքանէ իւ անդամնէն) բայց
կեցի՞ր , կարդա՛ անգամ մը , տեսնե՛մ , թէ ի՞նչ իրողութիւն
պած է զինքը ինծի նամակ գրելու :

Ա Ա Ր Դ Ա Կ

(Ամէսի Էպիթակ)

“Ամենավեհանձն թագաւոր Հայոց :

“Ուսնաբէ ծառայ Զեր Աերսէս և շնորհիւն Աստուծոյ հո-
գիւ Հայաստանեայց եկեղեցւց կը համարձակի այս նամա-
կաւս խնդրելու Զեր Ա հափառութենէն , որ բարեհածնիք
աչուընիդ դարձնելու անգամ մը այն երկրին վրայ՝ զոր
ս Աստախնամութիւնը Զեր խնամոցը յանձնած է : Տեսէք ,
Ա հափառ Տէր , անոր մօտալուտ թշուառութեան հանիլը .
որն որ , անկեղծաբար խօսելով , Զեր պատճառաւը տեղի պի-
տի ունենայ ”

Ա Ր Շ Ա Կ

Առէ՛ , լուէ՛ , գնա՛ իրեն անմիջապէս , և կրցածիդ չափ դա-
ռըն և կծու յանդիմանութիւններ թափէ՛ իր զիսուն վրայ .
գնա՛ շուտով : (Ա արդան Էլենայ) Ա յ անիծեալ ի՞նչ , միթէ
զինքը թագաւորի մը տե՞ղ դրած է . միթէ Արշակ իր ընելիքը
կրօնաւորէ՞ մը պիտի սորուի . ի՞նչ համարձակութիւն . ալ չեմ
կրնար համբերել . պէտք է որ շուտով պատճեմ զինքը :

(Ա Էլենայ . պահապահներն ալ էստէն)



ՑԵՍԱՐԱՆ Գ

ՈՂԻՄ ՊԻՍԴԱ ԵՒ ՀԵՂԻՆԵԿ

(ՏԵՇԱՐՄԱՆԻՆ ՊԼ ՀԱՂԲԻՆ ՔԱՂԾՎ)

ՈՂԻՄ ՊԻՍԴԱ

Օայրացած թաղաւորի մը խօսուածքը առիւծին մոնչը...
արբերութիւն չունի, և միայն բաւ է իր սահմանին մէջ բու-
լոր գտնուողները ահուդողին մէջ ձգելու: Թագաւորները ի-
րենց այս մասնաւոր յատկութեամբը շատերուն յաղթած են.
թագաւորի մը հրացայտ աշուլներուն միայն մէկ նայուածքը
բաւական է ամրող բանակ մը սարսափեցընելու: Յիբաւի՝
այս սեպհական յատկութիւնը առանց պատճառի շնորհուած
չէ իրենց: Խրաւախոչ և արդարագատ թագաւորի մը բեր-
նէն ելած արդար վճռոյն հնազանդելու և 'ի դործ գնելու է
դայն: Ո՞ր և իցէ եղելութեան մը համար թագաւորի մը
բերնէն ելած վճիռը այնպիսի ներդաշնակութիւն մը պարու-
նակելու է՝ որն որ յայտնապէս ցուցընէ, թէ վճռատուն ան-
դրդուելին է իր տուած վճռոյն վրայ . . . : Ի՞այց իշխողները
մեծ զգուշութիւն պահէլու են այս պարագայիս մէջ, և լաւ
նկատելու են, որ իրենց տուած վճիռը լոկ երևակայական
շարժառիթէ մը ծագած կամ իրենց փառամոլութեան արդա-
սիքը չըլլայ: Անխոչեմ թագաւորի մը կամ իշխանի մը տուած
վճասը շատ ծանր է իր իշխանութեան տակ գտնուած երկրին
վրայ. իսկ իր ժողովրդեան օրհնութիւն մըն է այն թագաւո-
րը՝ որն որ ամեն բան արդարութեամբ և խոչեմութեամբ քըն-
նելով՝ կը իրկէ իր վճիռը երկրին մէկ ծայրէն մինչեւ մէկալ
ծայրը:

Անալիլը մարդուս մէկ թերի յատկութենէն յառաջ եկած
է. ուստի թագաւորը ևս կընան սիսալիլ. ապա ուրեմն՝ թա-
գաւորները իրենց վճիռը դեռ շիտուած՝ ամենանուրբ հայեցո-

դութիւն մը նետելու են ըրած ձեռնարկութիւններնուն վրայ .
անկէց վերջը թող իրենց բերանը համարձակութեամբ հնչէ
վճիռը : Ահա թագաւորի մը բերնէն ելած ասանկ վճույ մը
ներդաշնակութիւնը սիրով կ'ընդունուի ժողովրդեան կողմանէ .
թէ և ըլլայ , որ անոր աշեղագոչ ձայնը լեռները 'ի հիմանց
սարսելու և զանոնք տակն ու վրայ ընելու չափ աղդեցութիւն
ունենայ :

Դայց՝ աւա՛լ , որ Արշակ Խիստ տարբեր թագաւոր մըն է .
ինքը բնաւ չի խորհիր Հայաստանի երջանկութեանը վրայ , այլ
միայն իր անձնական երջանկութեանը և սրտին թելադրու-
թեամբ վրայ կը մտածէ : Յիրաւի , մինչև որ բերնէն ելած
մէկ վճիռը 'ի գործ չի դրուի , սիրով չի հանդարտիր , բայց և
այնպէս երբէք արդարութեամբ գործ չի տեսներ : Խիստ հը-
պարտացած է իր թագաւորութեանը վրայ , բայց իր պաշտօնին
պարտաւորութիւնները ոչ կը ճանչնայ և ոչ ալ փոյթ ունի
ճանչնալու : Կ'արծես թէ , ինքը միսին իր երջանկութեամբ
համար գահը ելած է

Աւա՛լ քեզ , Հայաստան , աւա՛լ , հազար աւա՛լ
յիրաւի , թէ և ես քու վրադ խորհելու պատճառ մը չունիմ ,
բայց սրտիս մարդասիրական սկզբանցը դէմ ի՞նչպէս կրնամ
կենալ : Այս' , եթէ երբէք Հայոց թագաւորութիւնը վտան-
գաւոր ըլլար իմ հայրենեացս , այն ժամանակը սիրով պիտի
ուղէի , որ շարունակ ասոր նման Արշակներ թագաւորէին Հայ-
աստանի վրայ . բայց ասանկ չէ բանը . արդ՝ ես ասանկ աղ-
նիւ , քաջ , սրտու և վեհանձն ցեղի մը յառաջագիմնութեամբ
փափաքելու եմ , և որ քան զօր պայծառութեանը :

ՀԵՂԻՆԻ

(ՏԵՍՏՈՒՆԻՆ Յահ Էպուլ Հայելու) Տիրուհի :

ՈՂԻՄՊԻԱ

ՀԵՂԻՆԻ :

ՓԱՌԱՆՉԵՑԻ

(Պատրիարք) ԱՌՈՇ, Հայր իմ, շուտով կ'ամբասանեմ զայն
թագաւորին. դու հանդիսատ եղիք: (Փառանցէ ներս իւ հրանէ,
Ուժականութեալ գործութեալ իւ բարեւեն:)

ՏԵՍԱՐԱՆ Պ

ԱՌՁԻՆՆԵՐԸ ԵՒ ՓԱՌԱՆՉԵՑԻ

ՈՂԻՄՊԻԱԴԱ:

(ՄԻՒ ՔՐԸ) Ո՛ անիծեալ օր . . .

ՓԱՌԱՆՉԵՑԻ

(ՄԻՒ ՔՐԸ) Ի՞նչ անարդութիւն . . . (Երշակ իւ հրանէ:)

ՏԵՍԱՐԱՆ Ե

ԱՌՁԻՆՆԵՐԸ ԵՒ ԱՐՃԱԿ

ԱՐՃԱԿ

(Ուժականութեալ և գործանցէ գեղ ուելլ հրանելով)

Ո՛ երջանկութեանս, ո՞ իմ պալատիս զարդերը: Ո՞րչափ
մեծ ուրախութիւն է իմ սրտիս ձեր այսպիսի աննախանձ և
սիրալիր կենցաղավարութիւնը: Այս ընթացքով միայն կըր-
նաք վայելել ձեր թագաւորին անկեղծ սէրը, և ձեր կեանկը
խաղաղութեամբ ու երջանկութեամբ անցունել այն բազկացը
տակ՝ որոնց հովանաւորութիւնը միշտ ապահով է կին-

սատու է : Ողիմպիադա , գու իմ պալատիս առաջին բուրաստանն ես , և ես կը հրճուիմ քեզմով . իսկ գու՝ Փանանձեմ , ի՞ր բուրաստանիս գեղեցկութիւնն ու շքեղութիւնն աւելցընող վարդենին ես . բուրաստանս քեզմով կը վսեմանայ , և գու անոր շքովը գեղեցկութիւնդ ու փափիկութիւնդ կը պահես . իսկ Արշակ ձեր երկուքէն ալ իր սրտին զուարթութիւն կ'ըսպասէ . և այս զուարթութիւնը ընդունելու համար՝ ոչինչ կը խնայէ ձեղ : Արդ՝ անտրոտոնջ և գոհութեամբ յանձնեցէք զձեղ այն բազկացը՝ որոնց զօրութիւնը տարածուած է այսօրուան օրս բոլոր Հայաստանի վրայ : Հատերը զերենք երշանիկ կը սեպեն , թէ որ անոր չուքին տակ մտնելու պատեհութիւնը ունենան . . . (Վանաց անհանդարութեամբ նշարելով) Բայց ի՞նչ կը նշանակէ ձեր այս լուռ , տիսուր ու անշարժ կեցուածքը . միթէ Արշակայ ներկայութիւնը տհաճելի՞ է ձեղ : Ողիմպիադամ , երբ Արշակայ հետ առանձին այն քաջորածայն սոխակին կը նմանիս՝ որուն ձայնը անտառին խոր լուռութեան մէջ (թափառող) և յօգնած ճամբորդին՝ նոր քաջալերութիւն կ'ընծայէ , չիմա ինչու լեզուդ քմացդ կպած ոչինչ կ'ուզես կամ կրնաս արտասանել . կազմութեանդ վեհանձնութիւն պարգեող զգացումդ ուր է հեռացեր արդեօք . . . Ճիշդ այն օրիորդին կը նմանիս՝ որ աչուլները իր սիրելոցն շիրմին վրայ տնկած՝ ոչ կրնայ վեր նայիլ , և ոչ ալ միմիթարութիւն մը ընդունիլ : Խօսէ , Ողիմպիադա , և մի՛ վշտացըներ քու թագաւորիդ սիրալ :

ՓԱՌԱՆՉԵՄ

(ԱԷՒ ՀԱՅ) Զեմ կընար գիմանալ . ի՞նչ նախատինք :

ՈՂԻՄՊԻԱԴԱ

ԱՇ , Տէր իմ . . . ինչու ինձի պէս չնչին աղախնոյ մը համար ձեր սրտին հանդարտութիւնը կը կորսլնցընէք . . . Ողիմպիադա ձեր գերին է , և դուք անոր իշխանը , թագաւոր

րը, հրամայեցէք իրեն, և ոչ թէ իսդրեցէք. Ողբմպիադաւա-
միշտ պատրաստ է զձեղ երջանկացընելու . . . տէր իմ . . .
տէր իմ . . .

ԱՐՃԱԿ

(Ուշմուկադավ յեւ+էն բունելու) Ողբմպիադա . . . ի՞նչ ան-
սովոր . . .

ՈՂԻՄՊԻԱԴԱ

ԱՇ, տէր իմ, ներեցէք ձեր նոռաստ աղախնցն . . .

ԱՐՃԱԿ

ԱԵՂԻՆԷ, առաջնորդէ՛ տիրուհիդ իւր հանգստարանը: (ԱԵ-
ՂԻՆԷ իւ բանէ Ուշմուկադավ յեւ+էն, ու էսէին երեւան:)

ՈՂԻՄՊԻԱԴԱ

(ՎԵՐ էսէվ) Արդեօք Վահը ասկէց սոսկալի՞ է . . . (Կ'Ե-
ՐԱՆ Ուշմուկադավ և ԱԵՂԻՆԷ:)

ԱՐՃԱԿ

Վակէց աւելի չի յուսացուիր Ողբմպիադաի նման փափիկա-
սիրտ կնիկէ մը. մանաւանդ իր հայրենիքէն չեռու օտար երկ-
րի մէջ: (Փատանյեմի բարենալու) Խսկ դու՝ Փառանձեմ, ո իմ
սրտիս նոր երջանկութիւնը, կը յուսամ որ ամենեխն պատճառ
մը չունիս տիրելու. բայց զարմանալին ան է որ՝ դու ալ ան-
կէց պակաս չես երենար մտատանջութեան մէջ: Ի՞նչ, Փա-
ռանձեմ, արդեօք Գնէլոյ համար ունեցած վշտերդ նորոգուե-
ցան . չէ որ քու բերնովդ խոստովանեցար, թէ Արշակ Գնէլէն
հազար անգամ առաւել համելի է քու սրտիդ:

ՓԱՌԱՆՉԵՄ

ԱՇ . . . թող գիտնայ իմ թագաւորս, որ թէ և Գնէլոյ
ահուելի ուրուականը գեռ կը տանջէ զիս գիշերուան հանդը-

տութեան ժամերուս մէջ արթնցընելով զիս, բայց Փառան-
ձեմի մատանշըութիւնը խիստ հեռաւոր առարկայի մը հետ
կապակցութիւն ունի. և այսպիսի շարժառիթ մը կամ ներ-
քին զդացում մը հարկաւ կ'ապերջանկացընէ զիս. որ եթէ
շարունակուի, տարածամ Առաջուան գիրկը պիտի յանձնէ զիս :
Ծանոթ գիտնայ իմ տէրս, որ իւր վեհանձնութենէն 'ի ղատ ու-
րիշ միջոց չիկայ զիս այս վիճակէս աղատելու :

ԱՐՃԱԿ

Ես, Ես . . . թէ որ Երկինք իր ահեղ զօրութեամբը
մարտնչի քեզի դէմ, անպատճառ պիտի աղատէ զքեղ Արշակ.
և թէ որ Տարտարոսը իւր ամեն կատաղութեամբը զքեղ ա-
պերջանկացընելու աշխատի, դարձեալ Արշակ իր մէկ շարժ-
մամբը կարող է անոր միջոցները քու սահմանէդ յաւիտեան
հալածելու : Ես Արշակ եմ, փառանձեմ, ճանչցիր զիս ու-
րեմն. և բայց քու սրտիդ վշտաց ակը : Համարձակ ձգէ
զլ Արշակ քու սիրտդ քննելու, թէ որ իրեն կ'ապաւինիս, և
թէ որ իրեն կը յանձնես ինչ որ Ես, և ինչ որ ունիս : Արդ՝
բաց սիրտդ, փառանձեմ, և թող Արշակայ աշուըները ժամ
մը առաջ նշմարեն այն անիծեալ որդը՝ որ զքեղ կը տանչէ :

ՓԱՌԱՆՉԵՍ

Ծանոթ իմ տէրս իւր սրտին զդացումը այսչափ չի բարձրա-
ցունէ. ինչու որ Արշակ իր մէկ փոքր հրամանաւը և մէկ
պարզ խօսքով կրնայ աղատել զֆառանձեմ իր վիճակէն :

Զեր խոնարհ աղախնցն մատանշըութիւնը ոչ Երկնից, և
ոչ ալ Տարտարոսին արդասիքն է : Տէր իմ, այն որդը՝ որ
սրտիս մէջ մտած զիս կը տանջէ, միայն ինձի բնական ե-
ղած մէկ զդացումն է : Իմ թագաւորս իւր աղախնցն սիր-
ութեամբ վայլեցընելու համար՝ բաւական է որ "կը սիրեմ
զքեղ, փառանձեմ", խօսքը արտասանէ :

ԱՐԾԱԿ

Ուրեմն տարակոյս ունիս իմ վրաս . . . ի՞նչ պատճառ քու մաքիր մէջ այդ տարակոյսը ծնոցյ, և ի՞նչ նշան կը խնդրես Արշակէն՝ որով վատահիս, թէ կը սիրէ ինքը զքել: Արշակ այնչափ կը սիրէ զքել, զոր թերեւս չես յուսար: Փառանձեմ, Փառանձեմ, հաւտոտա, որ քու տարակոյսդ չէ թէ միայն վատացոց զիս, այլ նաև զարմացոց ալ. ի՞նչ, միթէ Արշակ իր սրտին չիսիրածը իր սահմանին մէջ պահել կ'ուզէ: Արշակ քու այդ դգացմանդ ծածկոցին տակ պարզապէս կը նշանը այն կանացի միջացը՝ որով կրնայ ընդունիլ իդական սեռ զինքը սիրովէն այն բանը՝ զոր ուրիշ կերպով մը չիյուսար ձեռք բերել:

ՓԱՄԱՆՉԵՄ

(ԱՐԷ ՀՊԵ) Զէ, այս անդամ չիյայտնեմ:

ԱՐԾԱԿ

Խօսէ, Փառանձեմ, և ինդրէ Արշակէն ի՞նչ որ կը բաղձաս ունենալ:

ՓԱՄԱՆՉԵՄ

ՎՇ, տեր իմ, սիրալ կը կարդաք իմ սիրաս. չէ, ձեր աշղախինը ոչ ինչ կը բաղնայ. վասն զի ձեր պալատին երջան կութիւն պարգևող բաներէն և ոչ մէկ բան կայ՝ զոր ինքը առատապէս չիվայելէ. միայն այն սիրոյն կը փափաքիմ՝ զորն որ խոնարհաբար կը յուսում իմ թագաւորիէս, թէ և անարժան ալ ըլլամ անոր: (Ա արդան էլ մոնէ)

ՏԵՍԱԲԱՆՆ Զ

Ա Ռ Զ Ի Ն Ն Ե Բ Ը Ե Ւ Վ Ա Ր Դ Ա Կ Ա Ն

Վ Ա Ր Դ Ա Կ Ա Ն

Ա Հ Հ Ա Ղ Ո Ւ Ն Դ :

Ա Ր Ճ Ա Կ

Ի՞նչ լուր կերպէսէն :

Վ Ա Ր Դ Ա Կ Ա Ն

(ՄԵՒ ՔՐԴ) Ի՞նչ խօսիմ թագաւորիս . . . (Ք-ՔՐ) Ար-
դէն ինքը ձեր պալատին մէջն է : (Ք ՄՊՆ կերպէն)

ՏԵՍԱԲԱՆՆ Ե

Ա Ռ Զ Ի Ն Ն Ե Բ Ը Ե Ւ Վ Ա Ր Դ Ա Կ Ա Ն

Փ Ա Ռ Ա Կ Զ Ե Մ

(ՄԵՒ ՔՐԴ) Ո՞վ դժբաղդութեանս . . . աշամ սրտիս ա-
սելութեան առարկաներէն մէկն ալ. որուն դէմքը անդամ տես-
նել չեմ ուզեր : (ՔԵՐԾԱՅ)

Վ Ա Ր Դ Ա Կ Ա Ն

Ա շ ա մ ի ն ք ը , տ է ր ի մ :

Ա Ր Ճ Ա Կ

(ԲԱՄԲԻՆ-ԲԱՆԻ կերպէն կը այս ժամանակ անելու) Ո՞վ ես դու կերպէս ,
որ կը յանդգնիս զԱՌԾԱԿ յանդիմանելու :

Ն Ե Բ Ա Է Ս

Հանդարտէ, ԱՌշակ, և տեղի մի տար սրտիդ մէջ մանելու այն տղայական կամ լաւ ևս է ըսկմ սատանայական հապատութեան . որուն աղէտալի արդասկիքը շատ անդամ արեան մէջ լողացուցած է զԱշխարհ : ԱՌշակ, ԱՌշակ, բայց աչուլներդ, և նախ քու վրադ գարձնուր զանոնք անդամ մը . տես, թէ արբայավայել վեհանձնութիւն ունիս մի: ԱՌշակ, քննէ քու սիրտդ և տես, թէ Հայկական իշխողի մը զգացումը կրնան գտնել հն . . . : ԱՇ, ԱՌշակ, դարձնուր աչուլներդ անդամ մը այն երկրին վրայ՝ զըր քու Կախնիբդ անբիծ յանձնեցին քեզ . տես, թէ Ի՞նչպէս աղէտից գալստեան գուժաբեր ամպերը անոր պայծառ մթնոլորտին վրայ կ'սկսին թանձրանալ: Ասկա՛, ԱՌշակ, նախատես ըլլալով՝ Հայաստանի այն ահռելի թշուառութեան տեսարանէն՝ որն որ եթէ կատարուի, անոր աւերակներուն անշունչ քարերը անդամ չի պիտի դադրին զքեզ անիծելէն . ո՛չ, այն ժամանակը քու ունայն աւաղներդ չի պիտի կարենան ողորմութեան Արարչին առջեր ելլել. կը յուսան, որ այն ահեղ օրուան մէջ դատաւորաց դատաւորը քու դատապարտութեանդ վճիռը չի դուացունէ:

Ա Ր Ճ Ա Կ

Դու մի՛ հոգար զիս. առանց քու յորդորանացդ ես ինքնիւրենս կրնամ խորհիլ, թէ ի՞նչ պիտի ըլլայ իմ վախճանս :

Ն Ե Բ Ա Է Ս

ԱՌՇ, կրնաս. բայց գիտցիր, որ բոլորովին անկարող ես դու սիրտ փոխելու, և հետևաբար չես կրնար թէ՛ քու անձիդ և թէ՛ իշխանութեանդ տակ գտնուած բազմաթիւ ժողովրդեան վրայ գալիք չարիքներուն առջեր առնել:

Ա Ր Ճ Ա Կ

Տայց ի՞նչ կուղես հասկըցընել բոլըր այդ խօսքերովդ . միթէ կը կարծե՞ս , թէ այդպիսի ձոռոմնարանական խօսուածքովդ պիտի կարող ըլլաս Արշակայ սոսկումն պատճառելու , և զայն քու ոտիցդ առջև խոնարհեցընելու , որ աչուըները գեպ ՚ի քեզ տնկած օգնութիւն խնդրէ : Հեռացի՞ր , Կանքսս , և մի՛ ջանար Արշակ քեզի հնաղանդեցընելու . հեռացի՞ր , քանի որ անոր զայրացթը իրու է . բազդաւոր սեպէ զքեղ և հեռացի՞ր :

Ն Ե Բ Ս Է Ս

ԱՇ , Արշակ , ի՞մ զաւակս , գօնէ Հայաստանի վասյ Խըզչա՞ . գիտցի՞ր , Արշակ , որ քու այս ընթացքդ ոչ թէ միայն քեզի վնասակար պիտի ըլլայ . չէ՞ , Արշակ , բազմաթիւ անմեղ անձինք անպատճառ պիտի զոհուին թշնամեաց արեանարբան զէնքերուն , և միայն քու պատճառաւոդ : Երբ Ամենակարողը թագաւորի մը չարութեան պատիմը տալու կը պատրաստուի , դաշխարհս կը թշնամացընէ անոր հետ :

Ա Ր Ճ Ա Կ

Եւ ի՞նչ , միթէ Արշակ զանոնք բոլորն ալ հալածելու զօրութիւն չունի՞ մի . միթէ երակներուն մէջ Հայկական արիւնը չեռարի մի : Տայց , Կանքսս , խօսէ՛ ինձի : ո՞ր ընթացքս կարծես որ , ինձի գեմ զայրացընէ զերկինք :

Ն Ե Բ Ս Է Ս

Դառ ինքդ տգետ չես յանցանքներուդ . աչա՛ Գնէլայ մահը լոկ հպարտութեանդ արդասիրն էր . բայց ասկէ աւելի քստմնելի էր անոր Փառանձեմ կինը քեզի կնութեան առնելդ :

Ա Ր Ճ Ա Կ

ՎՇՆԸ, միթէ Արշակ աղատ չէ՞ Երկու կին ունենալու:

Ն Ե Ր Ս Է Ս

Անշնուշտ չէ. Երկու կին, Քրիստոնեայ թագաւոր մը՝, և
ան ալ մարդասպանութեամբ, ո՞չ, աշարկու իրողութիւն...
Խեղճ Ողևանպիադաք... արդեօք սրտէն ի՞նչ արեան գետ վա-
զեց: Ո՞չ, 'ի սէրն Երկնից, և 'ի պարծանս Հայկական վը-
սեմ դրօշակին, Եկալը և ալ բաւական համարէ՛ անձիդ հա-
մար ծառայելդ, հետևէ՛ քու 'Կախնեացդ նախանձելի օրինա-
կին. Հայրենասիրական զգացմանը լեցուէ՛, և խորհէ՛ թէ այս
արքունական դահը ի՞նչպէս պիտի յարդես:

Ա Ր Ճ Ա Կ

Լուէ՛, լուէ՛, և մի՛ ջանար զիս բարկացընելու:

Ն Ե Ր Ս Է Ս

Արշակ...

Ա Ր Ճ Ա Կ

Ինաւ է, 'Կերակս:

Ն Ե Ր Ս Է Ս

Տես սա ճերմակ մազերս, և յորդորանքներս մի՛ անար-
դեր. զիտցիր, որ Հայրենեաց սէրն է որ զիս այսչափ կը խո-
նարհեցընէ քեզի աղաւելու:

Ա Ր Ճ Ա Կ

'Կերակս, հեռացիր, և մի՛ ստիպիր զիս վրադ անհաշտ թըշ-
նամիի աչքով նայելու:

Ն Ե Ր Ա Է Ս

Ինձ գէմ թշնամութիւն ո՛ Երկինք . . . ի՞նչ ապե-
րախտութիւն . . .

Ա Ր Շ Ա Կ

Դեռ կը կենաս առջևս . . . ի՞նչ յանդզնութիւն . . .

Ն Ե Ր Ա Է Ս

Ի՞նչ սիրտ ո՛ անզդայութիւն . . .

Ա Ր Շ Ա Կ

Վերսակս, հեռացիր կ'ըսեմ:

Ն Ե Ր Ա Է Ս

Ա'ապաւինիմ Երկնից արդարութեանը. և կը յուսամ, որ
միայն դու պիտի պատժուիս: (Ա'երեայ)

Հ Ե Պ Ի Ն Է

(Պատրաէն) Օգնութիւն (Աւունէ իւ օննէ և չինայ
Արշակա սովոր սովոր) Օգնութիւն, տէր իմ, Ողբմափաղա Ո՞մհ-
ուան քրտինքներուն մէջ կը լողայ:

Ա Ր Շ Ա Կ

Պատիժներն սկսան արդեօք. զլսէս մինչեւ ոռքս կը դո-
ւայ . . . (Ա'երեայ)

ԳԵՐՋ ԵԹԸՁԻՆ ԵՐԵՐՑԻՒՅՑԻՆ

ԱՐԱՐՈՒՄԾ ԵՐԿՐՈՐԴ

ՏԵՍԱԲԱՆ Ա

ԱՐԺԱԿԱՅ ՊԱԼԱՏԻՆ ՄԻԶ ՇՔԵՎԱՋԱՐԻ ՍԽԵԵՎԿ ՄԸ

ՓԱՌԱՆ ՁԵՄ ԵՒ ԱՆ ՔՈՎԿ

ՓԱՌԱՆ ՁԵՄ

(ԱԵՐԱ ՏՊՆԵՄԸ) Ա Երջապէս Գնէլ Արշակայ վովտուեցաւ,
և իշխան մը՝ արքայի . բայց Փառանձեմ աւելի պատուաւոր
ու երջանիկ էր, քանի որ իշխանի մը միայն սիրելի ու մէկ
հատիկ ամուսինն էր. իսկ Հիմա՝ թէ և արքայի մը կին եղած
է, բայց անպատուութեամբ և ապերջանկութեամբ. ինչու որ
Փառանձեմ միայն Արշակայ կիներէն մէկը կրնայ կոչուիլ հե-
մա, բայց ոչ առաջներ: Ա՛հ, մէծ անպատուութիւն է ինծի
ասիկայ, և չլավիտի կարենամ ազատ շնչել և երջանիկ կոչել
զիս, մինչև Արշակայ պէս թագաւորի մը առաջին կինը չը-
լալով՝ Աշխարհէս չիգովարանիմ: Ի՞նչ բան կրնայ երջան-
կացընել արդեօք ո՛ւ և իցէ կնկան մը սիրու, եթէ ոչ տեսնել,
որ իւր ամուսինը զինքը ամեն բանէն աւելի կը սիրէ ու կը
պատուէ. քանի որ ամենանուաստ աստիճանի անթիւ կանայք
արժանացած են այս քաղցր նեկտառը խմելու, միթէ Փա-
ռանձեմ, միթէ Անդովկայ աղջիկը պիտի զրկուի՞ անկից. թէ
որ ասանկ է, աւելի աղէկ կըլլար որ կամ բնաւ ծնած չը-
լայի, կամ գեռ Աշխարհս չիձանցցած՝ Ա՛ահուան ճիրաններուն
մատնուէի. բայց չէ, քանի որ կ'ապրիմ . . . է՛հ, ի՞նչ խօ-
սիմ. այս գառն գժբաղդութիւնը՝ խելագարութեան պիտի
մատնէ զիս . . . գոնէ այս աստիճանի գեղեցկութիւն չունե-
նայի . . . ո՛հ, հայր իմ . . .

Ա Ն Դ Ա Վ Կ

Այս՝ Փառանձեմ. մեծ անպատութիւն է քեզի Արշակայ առաջին կինը չըլլալ, և նախատինք է նաև մեր գերդաստանին. ինչու որ Աղմագիագա չէ թէ միայն իր գեղեցիութեամբը քեզի չիհաւասարիր, այլ նաև այսպարհ չ'ունի Արշակայ առաջին կինը կոչուելու. արդ իմ աղջկիս, այսպիսի նախատինքի մը առջել առնելու է, քանի որ յարմար ժամանակն ու միջոցը մեզի համար աղէկ են : Դեռ շատ չընէր որ Արշակ իրեն կին կոչեց զքեզ. հետեաբար զքեզ կը սիրէ. արդ՝ դու կինաս ամեն կերպով անոր սիրալ գրաւելով՝ իրեն առաջին կինը ըլլալ, ու պատիւ Անդովկայ գերդաստանին : Դիւ ամես. Պառանձեմ, որ գեղեցիկ կին. մը իր լեզուով և ընթացքով կրնայ յաղթել շատ անգամ զինքը սիրովին սրտին զգացմանցը, և կրնայ առաջնորդել զայն իր ուղած Երկինքը կամ Դժուկը : Ակը կօյր է. հետեաբար խորամնկութեամբ խառն շողգործութիւնը ուր որ ուզէ կը տանի զայն առանց դժուարութեան, մանաւանդ՝ քեզի պէս գեղեցիկ կին մը Արշակայ նման սիրոց գերի եղած մէկը կրնայ ուղածին պէս կառավարել : Արդ սիրտ առ, Պառանձեմ, և առջի պատեհութեամբ Արշակայ սիրալ քեզի գրաւելու աշխատէ : Հարկ չի կայ քեզի սորվեցընելու, թէ ինչ ընթացք բռնելու ես, ինչ չու որ աւելի ճարպիկ ես գու այս մասին . չեմ կարծեր թէ սեռիդ բնական ընթացքը ի գործ գնելու համար շատ դժուարութիւն պիտի քաշես :

ՓԱՌԱՆՉԵՄ

Այդ մասին վստահ եղի՞ր, հայր իմ, Պառանձեմ զինքը սիրցընելով՝ շատ դիւրաւ կրնայ իրեն գրաւել Արշակայ սիրալը. բայց կը վախնամ, թէ Աղմագիագա արդէն ամենալաւ տեղը գրաւած է Արշակայ սրտին մէջ :

ԱՆԴԱՎԱԿ

ԵՇ, ատիկայ գժուար բան մը չէ գիտցի՞ր, Փառանձեմ,
որ արականք շատ դիւրութեամբ կը խաբուին վարպետորդի
իգականաց, և շատ դիւրաւ կը մերժեն արդէն քիչ մը առաջ
իրենց սիրոյն առարկայ եղողը. մանաւանդ՝ երբոր երկրորդը
աւելի վեհանձնութիւն, աւելի գեղեցկութիւն և քաղցր խօս-
ուածք ունենայ:

ՓԱՌԱՆՉԵՄ

Ճշմարիտ է քու խոսքդ, հայր իմ, որ այդպիսի ընթացք-
ները կրնան մեկը իւր նպատակին հասցընել, բայց քիչ ան-
գամ ալ չի պատահիր, որ փուճը կ'ելլին:

ԱՆԴԱՎԱԿ

Դու աննկարելի գեղեցկութեամբ զարդարուած շուշանի մը
կը նմանիս. և այդպիսի գեղեցկութեան մը յափշտակիչ ըլ-
լալը ովկ կրնայ ուրանալ. երբ որ գեղեցկութիւնը վեհանձնու-
թեան բէհեղով կը զարդարուի՝ ան ատենը ալ անյաջող չի
կրնար ըլլալ: Քու անդուգական գեղեցկութիւնդ և վեհանձ-
նութիւնդ՝ զորս բնութիւնը քեզ մասնաւոր շնորհք մը ըրած
է, դիւրաւ պիտի կարենան յափշտակել զԱղիմպիադա Ար-
շակայ սրտէն, եթէ իրօք հոն տեղ մը գտած է ինք. և զքեզ
պիտի գնեն հոն. արդ՝ քաջալերուէ՛, և քու բոլոր ճիգդ թա-
փէ՛ միւսն այս նպատակին համար. անշնչտ պիտի համանիս այն
աստիճանին՝ զոր գերդաստանդ քենէ կ'սպասէ: Հեռացներ
մաքէդ անյաջողութեան խորհուրդը. և թող տիրէ քու սրտիդ
մէջ այն համարձակադէմ արիութեան չԼասուածուհին՝ որուն
ունեցած իշխանութիւնը մեծ է Աշխարհիս վրայ. շատ Ար-
շակներ շղթայակապ գերիի նման խորհութեամբ աս չԼաս-
ուածուհուցիւյն առջել ինկած են:

ՓԱՌԱՆՉԵՍ

Վղդու և համովիչ են քու խօսքերդ, ո՞ հայր իմ, և զիս
գրեթէ արդէն յաջողութեան կենսատու մթնոլորտը կը տա-
նին. սիրոս ասոր համողուած ըլլալով՝ այն քաղցր բայց ան-
հանդիստ վիճակին մէջ կ'իշնայ՝ որն որ կը պատահի այն թըշ-
ուառ արարածներուն՝ որոնք մերձակայ երջանկութեան յու-
սով մրաժիած ժամանակնին կ'երազեն։ Ե՛օ, կարծես հոդիս
կը թռչի և կ'ստիպէ զիս անմիջապէս ազատ ձգելու զինքը, որ
՚ի գործ դնէ այն ամեն միջոցները՝ որոնք զՓառանձեմ պիտի
բարձրացընեն ՚ի պարծանս իւր անուանը և Ենդովկայ գեր-
դաստանին։ Արդ՝ վստահէ, հայր իմ, և ապահով եղիք։

ԱՆԴՈՒՆ

Քու զգացմանդ արթնեալով ունեցած աճապարանքդ ան-
պատմելի ուրախութեամբ կը լեցընէ զիս. արիացիր ուրեմն և
սկսէ գործողութեան. առջի ընելիքդ զքեզ վշտացեալ ցուցու-
նելդ է, և այն աստիճան վշտացեալ որ Երշակ գրգռուի քու
վշտիդ պատճառը իմանալու. ահա այն ժամանակը թող հնչէ¹
քու լեզուդ այն բառերը՝ որմէք պիտի աղլեն Երշակայ սրտին.
դէմքդ՝ կապուտակ ալեաց մէջ ծփացող խնձօրի նման, մէջ մը
թող դուրս ցայտեցընէ իր կարմիր գցնը, և մէջ մը թող ծած-
կով այն ալիքներուն ծոցին մէջ. աչուըներդ թող երբեմն
մեղմութեան քաղցր ճառագայթներ արձակմէն, և երբեմն կը-
րակ ցատկեցընեն դուրս. քու շարժումդ այն զինսորին շարժ-
մանը թող նմանի՝ որն որ անիրաւ անյաջողութեան ժանիք-
ներուն մասնուած, նախանձը բորբոքած, վեհանձն ամօմթ մը
զինքը պաշարած և վիղը ծուած՝ անխօս և արձանացեալ կը
կանգնի իր եղացր դիակներուն մէջ. և իրեն սրտին՝ հօրի-
զոնին երեկոյեան սքանչելի տեսարանը անգամ չիկնար աղ-
գել։ Ա երջապէս՝ ջանք ըրե՛ հաւատացընել Երշակայ, թէ
քու այս բոլոր ընթացքդ հայրենասիրական զգացմանդ արդա-
սիքն է, որն որ անշուշտ պիտի ազդէ իրեն։

ՓԱՌԱՆՉԵՐ

Յաջողութիւն, հայր իմ, յաջողութիւն . . . Արշակ կամ
Հայրենասիրութիւնը պիտի մերժէ, կամ ընդունելով իմ ա-
ռաջարկութիւն՝ պիտի զբկէ զբղխաղիալա իր անիրաւ գահէն,
և զիս պիտի բարձրացընէ հօն . Ես ասիկայ յատակ կը կար-
դամ: Ո՞իթէ այսոց արքունական գահին այսպիսի նախա-
տինք մը ըլլալը կուղէ Արշակ . . . ով է եկողը . . .

ԱՆԴԱՎԱԿ

(Յագաւորը կուգայ . Ճարպիկ հղիք: (Անթեաց)

ՓԱՌԱՆՉԵՐ

ԱՇԽՈՒ, ինքն է: (Արշակ իւ սրճէ)

ՏԵՍԱԲԱՆԻ

ԱՐԴԱՎԱԿ ԵՎ ՓԱՌԱՆՉԵՐ

ՓԱՌԱՆՉԵՐ

(Իբր և Արշակ և ունանած) ԱՇ, ինչ առերջանիկ երկիր մըն
է այաստան . և անոր այս թշուառութեանը վրայ ո՞ր հայ-
րենասէր չիվշտանար:

ԱՐԴԱՎԱԿ

Աիրելի փառանձեմ:

ՓԱՌԱՆՉԵՐ

ԱՇ, իմ թագաւորս:

(Ո՞է ինչ բարեալով իբր նէ արտասահման իւ ո՞բէ)

Ա Ր Շ Ա Կ

Փառանձեմ, սիրելիդ իմ Փառանձեմ. ի՞նչ իրողութիւն վշտացոցած է զքեղ. միթէ իմ առ քեղ ունեցած սէրս գեռ չիձանչնալով կը յիշե՞ս այն Վնելը՝ որն որ իւր սէրը կը կոչքր զքեղ. միթէ Վնել թագաւորի մը ունեցած վեհանձն սէրը կրնար իւր սրտին մէջ կրել. միթէ այն զքեղ երջանիկ ընելու համար Արշակայ չափ կարողութիւն և կամք ունէ՞ր. Ե՛՛, ես չեմ ուզեր զքեղ այսպիսի տիրութեանց մատնուած տեսնել. դարձի՛ր առ իս և կարդա՛ Ճակտիս վրայ այն սէրը՝ որ քեզի համար սրտիս կենդրոնէն կը բդիկ. դարձի՛ր առ իս և յայտնէ՛ այն գաղտնիքը՝ որ քու սրտիդ մէջ ծածկուած է. Փառանձեմ, վստահէ՛ ինձի, և չեռացո՞ւր քու սրտէդ ամեն անվստահութիւն Արշակայ վրայ. և թող Արշակ դարձեալ տեսնէ՛ քու աննման դէմքդ ուրախութեան լուսով պայծառացած, ու երջանկանայ :

Փ Ա Ռ Ա Ն Զ Ե Մ

Ա՛՛, տէր իմ, սրտիս դառն վշտերը հազիւ կը ձգեն զիս խօսելու և հոն ծածկուած գաղտնիքը յայտնելու ձեր վեհառութեանը. գաղտնիքը ծանրակշունէ. բայց աւելի ծանրակը շունէ այն ծածկոցը՝ որ կարդիէ զայն յայտնուելէն. պատճառը զիս կ'ողբացընէ. բայց այն ձեռքը՝ որն որ զայն կը դոցէ, չիձգեր զիս ազատ՝ որ ներսէս դուրս տամ . . . ա՛՛, տէր իմ . . .

(Երեսը հէրէ իւրաքանչեան)

Ա Ր Շ Ա Կ

Եւ միթէ Արշակ կարող չէ՞ ազատելու զքեղ այդ վիճակէն՝ որուն տակը կը ճմլուիս. Փառանձեմ, Ճանցիր զայն՝ որ կը սիրէ զքեղ. և սրտիդ բոլոր վստահութեամբը յայտնէ՛ իրեն ինչ որ կ'ապերջանկացընէ զքեղ. Արշակն է՝ որ քեղ կը խօսի.

այն Արշակը՝ որուն կարողութիւնը Աշխարհի կը ճանշայ և
կը դողայ անկից. արդ խօսէ՛ համարձակ, և ապաւինէ ինձի:

ՓԱՌԱՆ 2 Ե Մ

ԱՇ, տէր իմ, գիտցիք որ միայն Հայրենեաց փառքը և ձեր
իմ վրաս ունեցած սէրն է՝ որ համարձակութիւն կուտայ ինձի
խօսելու՝ ձեր վեհափառութեան սիրտը հանդարտեցընելու հա-
մար. և ոչ թէ փոքր ինչ յստ մը ունենալով, թէ պիտի կա-
տարուի սրտիս այն սուբրբ իղձը՝ որն որ եթէ ուզուի, կանացի
և ամօթալի հպարտութեան և նախանձութեան արդասիք մըն
ալ կրնայ սեպուիլ. բայց Երկինք անգամ գիտէ, որ առ ձեզ
և առ Հայրենիս ունեցած սէրս կ'ստիպէ զիս յայտնելու այն
պատճառը՝ որն որ հոգւց գրեթէ ամեն կողմը շըջապատաճ,
սիրտս տակն ու վրայ ըրած՝ իմացականութիւնս անգամ իրան-
գարելու կը պատրաստուի:

ԱՐՃԱԿ

Արշակ կարող և պատրաստ է երջանկացընելու զքեղ. խօ-
սէ՛, սիրելիոր իմ Փառանձեւմ:

ՓԱՌԱՆ 2 Ե Մ

Ձեր վրայ ունեցած վստահութիւնս կը խրախուսէ զիս յայտ-
նելու, թէ Ողևմպիադա և միայն Ողևմպիադա է այն պատճա-
ռը . . .

ԱՐՃԱԿ

Ողևմպիադա . . .

ՓԱՌԱՆ 2 Ե Մ

Ողևմպիադա. այն, տէ՞ր իմ, այն Ողևմպիադան՝ որ զքեղ
ոչ կը սիրէ, և ոչ ալ կրնայ սիրել:

Ա Բ Շ Ա Կ

Ալը շողքքորթէ՞ զիս ուրեմն :

Փ Ա Ռ Ա Կ Զ Ե Մ

Ուրիշ բան չեկանար ընել, և չուղեր ալ :

Ա Բ Շ Ա Կ

Կ'ատէ զիս ուրեմն :

Փ Ա Ռ Ա Կ Զ Ե Մ

Ես չեմ կասկածիր, վասն վե :

Ա Բ Շ Ա Կ

Վաղցցց տնը, և վատահէ, որ անմիջապէս կը պատժեմ զինքը :

Փ Ա Ռ Ա Կ Զ Ե Մ

(Կեշելը) Ո՞չ, տէր իմ, իսկըն Երկնից մէ բարկանաք իրեն դէմ :

Ա Բ Շ Ա Կ

Յառաջ տակ քու խօսքդ, և յուցնը ինձի, թէ Ովլմակա- դա զիս կ'ատէ :

Փ Ա Ռ Ա Կ Զ Ե Մ

Իսյց խօստացիք, տէր իմ, որ զինքը չէք պատժեր :

Ա Բ Շ Ա Կ

Յառաջ տակ, փառանձեմ, և մնացածը ինձի ձգէ . . . մի- թէ Վաշակ պիտի խալուի անպիտան կնիկէ մը :

ՓԱՌԱՆՉԵՍՏ

Վայն, տէր իմ. մանաւանդ Յօյն կնիկէ մը. որն որ անարժաւ նաբար Հայոց թագաւորի մը առաջին և սիրելի կինը ըլլալը՝ նախատինք եղած է Հայաստանի շքեղ և պանծալի դաշին . . . բայց գալսնիքը, տէր իմ, զարհուրելի է. և ես պարտիմ յայտնել զայն ձերդ վեհափառութեան . վասն զի ձեղի պէս անզուդական թագաւորի մը կեանքը ապահով չէ, քանի որ ինքը տգէտ է այն իժին վրայօք՝ զորն որ իւր գրկին մէջ կը պահէ : Ողիմպիադա Յօյն է, տէր իմ, և հետեաբար չիկրնար սիրել Հայ մը. մանաւանդ որ կ'ատէ . . . ա՛հ, ինչպէս յառաջ տանիմ խօսք, չէ, չիհանրձակիր բերանս հնչել այն բառերը՝ զորոնք Ողիմպիադա կարծես վրիժապահ սրտով մը անզգայաբար կ'արտասանէ, և ձեր վեհափառութիւնը վատ Հայ և անարժան թագաւոր կոչելու կը յանդգնի :

ԱՐՃԱԿ

Ողիմպիադա զիս վատ Հայ կը կոչէ . . . վատ Հայ . . . անարժան թագաւոր . . .

ՓԱՌԱՆՉԵՍՏ

(«Օհկան Աբա») Ո՛հ, տէր իմ, մի զայրանաք իրեն դէմ. իր մանկութեան ժամանակ ստացած գալափարն է՝ որ զինքը այսպիսի կերպով կ'ստիպէ անարդելու այն ցեղը՝ որուն անունը անդամ կը սարսափեցընէ զթագաւորութիւնները : Ալ ինդքեմ, տէր իմ, մի վճուէք կայծակնահար դատապարտութեան մասնելու զինքը. արիստիրտ թագաւոր մը վեհանձն կը լըսց. և վեհանձն սիրալ ներողամութեան ոգի կը կրէ. արդ՝ տէր իմ . . .

ԱՐՃԱԿ

Ելիք, Փառանձեմ, այսպիսի յանցանքի մը չեմ կրնար ներումն շնորհել. եթէ իրօք այսպէս յանդգնաբար խօսած է ին-

ծի համար՝ անմիջապէս պիտի իրկեմ զինքը հօն՝ ուր ոչ Արշակ պիտի գտնուի, և ոչ ալ Ըրշակայ աղդէն մէկը:

ՓԱՌԱՆՉԵՄ

(Որո՞ք եւլէլով) Այս, տէր իմ, կրնաք անմիջապէս հեռացընել զինքը ձեր քովէն. և իւր փառքէն զրկուիլը անշնչտ ծանր պատիժ մը պիտի ըլլայ իրեն. և անպատի ու անարդուած՝ երես անդամ չնպիտի ունենայ իւր հայրենիքը դառնալու, որուն համար գրեթէ ամեն ժամ կը հառաչէ. և մեր երկիրը՝ երկիր թշուառութեան, երկիր անարդ չայսց կոչելով՝ “ա՛հ”, իմ հայրենիքս երբ պիտի տեսնեմ” կը դոչէ:

ԱՐՃԱԿ

Ի՞այց, Փառանձեմ, դու ինքդ լսա՞ծ ես իր սյսպէս խօսիլը, և կրնա՞ս ապացուցանել:

ՓԱՌԱՆՉԵՄ

Այս, տէր իմ, գեռ այս առաւօտ նցյն խօսքերը կրկնեց պարտէզին մեծ ձեմլիքին մէջ. ուր շատ անդամ կ'երթայ:

ԱՐՃԱԿ

(Քիչ ճշ ի՞որնելով) Ի՞արի. ուրեմն պատրաստուէ որ այս բանիս վկայութիւն տաս. և վստահ եղի՞ր, որ՝ եթէ Ողիմպիադայնցաւոր գտնուի, անմիջապէս իւր տեղը դու պիտի անցնիս. և Ողիմպիադա . . .

ՓԱՌԱՆՉԵՄ

Կ'աղաշեմ, տէր իմ, անդթարար մի վարուիք հետը. թողվեհանձնութեան ոգին՝ որն որ չայսց թագաւորներուն սրտէն

չիպակսիր, այս պարագայիս մէջ ալ տեսնութելով թող հիացընէ
բոլոր աշխարհը :

Ա Ր Ճ Ա Կ

Բայց երբոր թադատորի մը վեհանձնութիւնը արդարութեամբ զինեալ չէ, անիրաւութեան կը փոխուի. գթութիւնը և ներողամնութիւնը շատ անգամ տկար սրտի մը արդիւնքն են. և մանաւանդ ասանկ յանցանքի մը համար, որն որ ընդհանուր պայտաժանի նախատինը է . . . երկիր թշուառութեան կը կոչէ մեր երկիրը . . . բարի. ուրեմն թող ինքն ալ փարձառու ըլլայ այնպիսի թշուառութեան մը՝ զորն որ բնաւ չէ տեսած կամ չէ խորհած : Երդ՝ Փառանձեմ, դու պատրաստուէ անոր վրայ ըրած ամբաստանութիւնդ հաստատելու, և բնաւ մի խորհիր անկից վերջը ըլլակին վրայ :

Փ Ա Ռ Ա Ն Զ Ե Մ

Ես իմ կողմանէս այդ պարտականութիւնս կատարելու միշտ պատրաստ եմ. բայց սիրտս սաստիկ պիտի վշտանայ, թէ որ զինքը տեսնեմ սոսկալի դատապարտութեան մը որս եղած . զորն որ եթէ կամի ձեր վեհանձնութիւնը կրնայ մեզմացընել :

Ա Ր Ճ Ա Կ

(Տարակուածելով Փառանձեմ ու ըլլայ ամբաստանութեանը վրայ)

Դու պարտականութիւնդ կատարելէն 'ի լատ ուրիշ բան մի խորհիր, և մնացածը խծի ձգէ . միթէ Երշակ իր ընելիքը կնիկէ մը պիտի սորուի . չէ, չէ . թէ արդարութիւնը և թէ ուղրածածութիւնը կարող է Երշակ որոշելու և 'ի գործ գնելու : (Կ'երենայ)

Փ Ա Ռ Ա Ն Զ Ե Մ

(Վանէ ճը վայրէն իսրաւելու վերջը) Ո՞հ, արդեօք պիտի յաջողիմ, և փափաքիս հասնելով պիտի երջանկանամ . միթէ պիտի տեսնեմ՝ զԱղիմպիտա պատժուած և զիս յարդուած և բարձրացած այն ցանկալի աստիճանին՝ ուր միայն սիրտս կրնայ

Երջանկանալ : Ա՛՛, Ե՞րբ Փառանձեմ պիտի գովարանի Աշ-
խարհէս իբրև առաջին թագուհի Հայոց . Ե՞րբ պիտի տեսնեմ
զիս շրջապատեալ բարձրաստիճան պաշտօնակալներէ, որոնք
միայն պիտի Խորհին թէ ինչ կերպով կընան Երջանկացընել
զիս : Ա՛՛, Փառանձեմ, Փառանձեմ, երանի քեզ, Երբ
հասնիս դու քու փափաքիդ . իսկ թէ որ քու ջանքդ անօդուտ
ելլէ, հաղար եղուկ այն ժամանակը . աւելի աղէկ կըլլար որ
կայծակնահար վերջանար քու կեանքդ . . . բայց ես ինչո՞ւ
կը տարակուսիմ . միթէ կարելի՞՞է, որ ինծի պէս լեզուանի, գե-
ղեցիկ և վեհանձն կին մը չիհամնի իւր փափաքած յաջողու-
թեամբ . մանաւանդ որ բաղդը ինծի համար աղէկ է . աչա աս-
կէց քիչ մը առաջ լոկ Պնէի մը կինն էի, իսկ հիմա արքայի
մը : Այս, պէտք է որ մոքէս բոլըրովին ջնջեմ անյաջողութեան
Խորհուրդը, և արիութեամբ յառաջ երթամ բռնած ընթաց-
քիս մէջ, աներկիւլ և անկասկած . . . հայրս կուգայ . . .

(Անդառէ իւ ժոհէ)

ՏԵՍԱՐԱԿԻ

ՓԱՌԱՆԶԵՄ ԵՒ ԱՆԴՈՂԿ

ԱՆԴՈՎԱԿ

Փառանձեմ :

ՓԱՌԱՆԶԵՄ

Հայր իմ, ինչո՞ւ անսովոր . . .

ԱՆԴՈՎԱԿ

Ա ասն զի Արշակայ դիմաց գծագրութիւնը ինծի շատ
հաճելի չերեցաւ, երբոր մէծ սրահէն կ'անցնէր, կարծեմ
թէ տարակցոս մը տիրած էր իր սրտին մէջ . որն որ Ճակտին
վրայ ալ կըկարդացուէր :

ՓԱՌԱՆՉԵՑՄ

Է՞նհոգ եղիք դու, հայր իմ, և աղջկանդ վատահէ . ներ-
կայ գտնուելու էիր, երբոր կըլսօսէի թագաւորին հետ : Ողիմ-
պիադաի վրայ երբէք ատելութիւն չիցուցուցի . մանաւանդ որ .
երբ տեսայ զԱրշակ զայրացած, ծնկան վրայ աղաչեցի որ չի-
դատապարտէ զԱխմակադա ծանր պատժոյ մը, այլ միայն ար-
քունիքէն աքսորելով զայն՝ բաւականանայ : Խոկ Արշակ իմ ա-
ղաչանացս բնաւ ականչ կախել չուղեց, այլ հրամայեց ինծի,
որ ըրած ամբաստանութեանս ապացոյց տալու պատրաստուիմ :

ԱՆ ԴՐԱԿ

Ամբաստանութիւն . . . Բնչըսել կուղես :

ՓԱՌԱՆՉԵՑՄ

Աեցիք, մի' այլայիր, հայր . իմ ըրած ամբաստանութիւնս
այնպիսի վարպետութեամբ յօրինուած ու հիւսուած էր՝ որ
թագաւորը ոչ իմ ըսածներուս ճշմարտութեանը վրայ կընար
տարակուսիլ, և ոչ ալ կարաղէր տեսնելու սրտիս խորշերուն
մէջ ծածկուած դաղսնիքը և նոլատակը :

ԱՆ ԴՐԱԿ

Փառանձեւ, թագաւորները երբոր հետամուտ կըլլան ի-
րենց պաշտօնին ամեն մէկ ուարտականութեանցը, շատ քիչ
անգամ կարելի է որ խարսուն . բայց երանի թէ Արշակ զքել
անկեղծ ճանչնար :

ՓԱՌԱՆՉԵՑՄ

Հայր իմ, գու վստահ եղիք քու փառանձեմիդ վրայ . . .
մոլիս մէջ ուրիշ խորհուրդ մը կը ծագի :

ԱՆ ԴՐԱԿ

Բնչ :

ՓԱՌԱՆՉԵՑՄ

Թառնաւորել զԱղիմակիադա :

Ա Ն Գ Ո Վ Կ

Թառնաւորել . . .

Փ Ա Ռ Ա Ն Զ Ե Մ

Ա Յ Շ , այն . ամենէն ապահով միջոցը ասիկա է :

Ա Ն Գ Ո Վ Կ


Բայց Ի՞նչ կերպով :

Փ Ա Ռ Ա Ն Զ Ե Մ


Երթանք ասկից , և ամեն բան կարգի դնենք :

(Կ'ԷՐԱԲԱՆ)

ՎԵՐՋ ԵՐԿՐՈՐԴ ԱԲԱԲՈՒՅՑՈՅՆ



ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ



ՏԵՍՔՐԱՆ Ա

ՓԱՌԱՆ ԶԵՄԻ ՇՔԵՎԱԶԱՐԴ ՍԵՆԵԱԿԸ

Փ Ա Ռ Ա Ն Զ Ե Մ

Ա Յ Շ , ալ շատ քիչ մնաց , որ ես պիտի հասնիմ իմ
բաղձանացս . թակարգը այնպիսի վարպետութեամբ մը լար-
ուած է որ ոչ իսկ արծւոյն սրատես աշուշները կրնան գի-
տել զայն : Ո՞վ կը կասկածի երբէք , որ քահանայ մը իր ժո-
ղովրդեանը մահ ներկայացընէ . ո՞չ , ի՞նչ բարեբաղդ մէկն եմ
ես . կարծես ամեն միջոց ինծի կը հնազանդի . բաւական է որ
կամք ընեմ . աշա Երկինք , Երկիր , Պատուք և անոնց մէջ ա-
մէն ընակինները զիս իմ ըզձիս հասցընելու կ'աճապարեն :
Կարծես թէ , Երկնից էակները և Տարտարոսին ճիւաղները
օգնական են գեղեցիկ կնկան մը . ի՞նչ մեծ պարգև մըն է
կնկան մը գեղեցկութիւնը իրեն . գեղեցիկ ես , մի՛ վախնար .

զարդարէ դեղեցկութիւնդ արիութեան դօտիով . աւելցուր
ասոնց վրայ նաև վեհ շարժուածք և աղբու խօսուածք .
ահա մէկէն բոլոր Տիեզերք կը խոնարհին քու առջւեդ . հրա-
մայէ , և անմիջապէս քու կամքդ կատարուած պիտի տեսնես .
ահա այն քահանայն՝ որ սրբակրօն հոչակուած է , կը միա-
բանի այսօր ինձի հետ . զիղիմափիադա Ամահուան մատնելու :
Այս , պիտի մօտենայ քահանայն Ողիմափիադաի կենաց հա-
ցով , և վերցընէ պիտի անոր կեանքը . որն որ զիս քիչ անհան-
գիտ չըներ : Արշակ բոլորովին յափշտակեալ՝ զրեմէ մոռցաւ
իմ ըրած ամբաստանութիւնս . Արշակ՝ որ իւր անձին երջան-
կութենէն ՚ի զատ ուրիշ բան չի խորհիր , կուրացեալ է բոլո-
րովին նկատելու այն տեսարանը՝ որն որ շուտով պիտի կա-
տարուի . կը հաւատամ , որ Ողիմափիադաի անշարժ դիակը ան-
դամ չփափիտ կընայ կասկած մը տալ Արշակայ . . .

Արփացիր , Փանանձեմ , ամեն գործ սրտոտութեամբ գը-
լուս կ'ելլէ . աներկրայ կը հաւատամ , որ քիչ օրէն պիտի
բարձրանամ ես հոն՝ ուր իմ սիրոս կընայ խմել այն քայլու-
նեկտառը՝ զօր բաւական ժամանակէ ՚ի վեր օտարազգի կին
մը կը վայեկ :

Ունա՞ տեսնէ բոլոր Աշխարհ , թէ բաւական է որ կին մը
գեղեցիկ ըլլայ . ա՛լ չի կընար անյաջողութեան հանդիպիլ .
Կըր բաղդը անդամ անոր յարատե ընկերն է , և բաղդին
կառաւարութիւնը գրեթէ կնկան ձեռքն է . ապա ուրեմն ան-
յաջողութեան տարակցողը թող փարատի իգական սեռին սըր-
տէն . թող ճակատաբաց ձեռք զարնեն գլուխ հանելու ինչ
բան որ կը յուսան , թէ կընայ զիրենք երջանկացընել . և աս-
կէց ՚ի զատ ուրիշ ինչ բան կընայ կնկան մը սիրոը երջան-
կութեամբ լիցընել երբոր տեսնէ հպարտ մարդ մը իր ոտքին
տակը ինկած . որ պատրաստ է միշտ կատարելու ինչ որ իրեն
սիրոյն առարկան կը ցանկայ : Ահա այս է այն մէկ հատիկ
չնորհը՝ որով կանայք զիրենք բաղդաւոր կընան կոչել
աղատաբար . . . (Առաջնէ է մասնէ)

ՏԵՍԱՐԱՆ Բ

ՓԱՌԱՆՉԵՄ ԵՒ ԱՆԴԱՎԱԿ

ԱՆ ԴԱՎԱԿ

Փառանձեմ:

ՓԱՌԱՆՉԵՄ

Եհա՛ Ճակատաբաց և պարզերես, հանգիստ սրտով կիմացընեմ քեզ, որ մեր նպատակին շուտով պիտի համնիմք: Քահանայն՝ զոր այս անդամ մեր գործիքը ըրած ենք, իւր բոլոր խօրամանկութիւնը՝ ի գործ պիտի դնէ անթերի, և քիչ ատենէն պիտի խրկէ զԱղիմպիադա հօն՝ ուր գնացողները ալետ չեն դառնար: Եհա՛ տես հիմա, հայր իմ, թէ Փառանձեմ որպան բաղդաւոր է, երջանիկ կոչէ դու զքեզ:

ԱՆ ԴԱՎԱԿ

Քու Ճարսպիկութեանդ վըայ ունեցած համարումն ալ ստորագրութեան տակ չ'իյնար. արդ՝ թող նախանձին հայրերը իմ վրաս: Իսպաց Փառանձեմ, լաւ հսկողութիւն ըրէ՝ որ բըրած դաւադրութիւնդ չիյայտնուի. գիտցի՛ր որ խրական սեռուին մէկ պակասութիւնն ալ իր անխոհեմութիւնն է. շատ անդամ կանայք իրենց լարած որոգայթը կը յայտնեն անոր՝ որուն համար որ պատրաստած են: Երդ՝ Փառանձեմ, աշուլներդ այս մասին թող սրահայեաց ըլլան, մինչև որ գործը կատարուի:

ՓԱՌԱՆՉԵՄ

Օարմանք կը պատճառես ինծի, հայր իմ. ի՞նչպէս կը յուսաս որ Փառանձեմ այնչափ յիմար ըլլայ՝ որ իր ընելիքը թերի՝ ի գործ դնէ. գիտցի՛ր, որ աղջկանդ աշուլները այնպիսի նրբաքննին են՝ որ ո՛չ իսկ գիշերուան խոր մժութիւնը կրնայ արդիլել զինքը երկնից սահմաններէն վեր թռչող թռունը տեսնելուն: Գիտցի՛ր նաև, որ ես դիւրաւ կը կարգամ

ու և իցէ մէկու մը ճակտին վրայ ինչ որ սրտէն կանցնի :
Արդ՝ հեռացուր մզքէդ սյդ ունայն գաղափարը , և աեղի մի
տար , որ անգամ մալ տիրէ մոքիդ կասկածը : Ամենայն կեր-
պով վստահէ՛ քու աղջկանդ՝ որուն քաղցր հայեցուածը բա-
սական է Արշակայ պէս շատերը խօնարհեցնելու :

ԱՆ Դ ՈՎԿ

Ապա ուրեմն թող ևս անմերի երջանիկ կոչեմ զիս , որ
քեզ նման անզուգական աղջիկ մը ունիմ . . . բայց Փառան-
ձեմ , պատմէ ինծի , ի՞նչպէս եղաւ որ կարող եղար համոզե-
լու զքահանայն , որ այսպիսի սոսկալի գործի մը ձեռնամուխը-
լոյ . բնաւ ընդդիմութիւն չըրած :

ՓԱ Ռ ԱՆ ԶԵՄ

Դեռ կը տարակուամին , հայր իմ , Փառանձեմիդ վարպետու-
թեանը վրայ . միթէ ընդհանուր Հայաստանի վրայ տիրապե-
տող Արշակայ նման նրբաքննին և սրտաւս մէկու մը զգա-
ցումները իր ձեռաց մէջ ամելովող մէկը դժուարութիւն պիտի
քաշէ խեղճ , պարզամիտ և մանաւանդ շահամէր քահանայ
մը իրեն հնաղանդեցընելու . յիրաւի թէ և քահանայն առջի
բերան չուղեց անսալ ինծի , բայց գիտցիր որ , Փառանձեմիդ
այսպիսի կերպով և շարժմամբ խօսեցաւ անոր հետ՝ որ շուար-
եալ բառ մը անգամ արտասանելու կարող չէր . զիղիմ
պիադա այնպիսի հրէշի մը նմանցուցի . որ ինքն ալ լաւ սեպեց
անանկին կեանքը վերջանալը . Արշակայ իր կառավարութեանը
վրայ ունեցած անհոգութիւնը խիստ շատ ներգործեցին անոր
սրտին՝ անանկ որ՝ վերջապէս համոզուեցաւ , որ գէթ հայրենասէր
Հայազգի առաջին թագուհի մը պէտք է արքունեաց մէջ , և ան
ալ աննախանձ : Ահա . հայր իմ , այս տեսակ վարպետութիւննե-
րով կրցայ համոզել զինքը , որ թունաւորէ զիղիմպիադա երբոր
կենաց Հայոց անոր ներկայացունէ . ասկէց ՚ի զատ խօստացայ ի-
րեն , որ առատաձեռնութեամբ վարձտրեմ զինքը , և ազատել
ևս վտանգէ մը՝ եթէ իրօք պատահի :

ԱՆ ԴՐԱ ԱՎԱ

ԱԼ բոլոր տարակցյաներս և կասկածներս անհետացան . Հիմա ամենայն վստահութեամբ կը հաւատամ, որ դու պիտի համախ ի՞նչ բանի որ կը ցանկաս : Ապա ուրեմն . թող երջանկանայ հայրդ քեզմակ . և Անդովկայ գերդաստանը շուտով արքունեաց զարդերէն մէկը ըլլայ : (Ա'ԵՇԻԿ)

ՓԱՌԱՆ ԶԵՄ

ԱՅո՛, թող ես ըլլամ պատճառ . Անդովկայ գերդաստանին ապառնի պարծանացը, և թող հռչակուի՛ իմ անունս Տիեզերաց չորս կողմը : (Ա'ԵՇԻԿ)

ՏԵՍԱԲԱՆ Գ

Ուկանուադաէ հանդարարանը, Ուկանուադաէ միւսուէ ճը Հըսոյ, ինչադ, աւուշները ժոյց, ասեն իսպէն չըր սրուիւած, ժոյց ներած . Աւելինէ անշարժ և այլուր անոր ուով, և իւշներ վրան ծրած : Աւելուն վարած իսպէն ճը աւելունուէ :

ՈՂԻՄՊԻԱՏԱ ԵՒ ՀԵՂԻՆԵ

ՈՂԻՄՊԻԱՏԱ ԳԱ

(Աւուշները բանալու) ՀԵՂԻՆԵ . . .

ՀԵՂԻՆԵ

(Աւուշները բանալու) Տիւրուշիս . . .

ՈՂԻՄՊԻԱՏԱ ԳԱ

Կուլան դու, աղնիւ սիրտ, կուլան դու :

ՀԵՂԻՆԵ

Եւ ո՞լ կրնայ չիլալ Ամա՞չ, ո՞ր քար և անզտայ սիրտ կրնայ դիմանալ, երբ իւր աշաց առջեւ քեղ նման վըտայ զո՞չ մը տես-

Նէ, ամեն կերպով զըհուած, մերժուած և ատեցեալ, և այս
ամենէն ետքը՝ հեռու հոյթենիբէդ. հեռու այն քաղցր ա-
փունքներէն՝ որոնք աննկարագրենի բերկութիւն կընծայեն
Յօն սրտի մը: Այսո՛, հօն Յօն մը իր անմխիթարութեամ-
բը տակաւին միսիթարուած է . . . բայց դու ի՞նչ կ'ըլլաս . . .
ո՛վ Երկինք, դշնոր կը նետէ . . . կը կարմրի, կը ճերմկնայ
. . . կը դողաս դու, տի՛րուհիս, ահ՛րուհիս, ո՛հ, ի՞նչ կ'ըլլաս :

Ո Ղ Ի Մ Պ Ւ Ա Դ Ա

Հեղինէ, Հեղինէ, զիս Վահուան յանձնեցին . . . թունա-
ւորուած եմ . . . կ'զգամ . . . կ'խմանամ . . . անոր դառն ազ-
գեցութիւնը . . . կի . . . մանամ . . . ես . . .

Հ Ե Ղ Ի Ն Է

Գլժած Երկինք, . . . ի՞նչ կը խօսիս, . . . ի՞նչ թունաւոր-
ուիլ, և ե՞րբ . . . որմէ՞ . . .

Ո Ղ Ի Մ Պ Ւ Ա Դ Ա

(Որո՞ի Եւլէլէ) Քահանայէն . . . անօրէն քահանայէն . . . նը-
կատեցի ես զինքը . . . կը դողար, կը խորհէր, առջին կը նայ-
էր, իմ հարցումներուս չեր լսէր; կը կենար քիւ մը, կը
ներկայացընէր ինձ կենաց Հացը . . . դարձեալ ես կը քաշէր
. . . ա՛հ, այո՛, այո՛, տարակցա չունիմ . . . Հեղինէ, Հե-
ղինէ . . .

Հ Ե Ղ Ի Ն Է

Ի՞նչ ընեմ արդեօք . . . ես զիս կորազնցունելու վրայ եմ: . .

Ո Ղ Ի Մ Պ Ւ Ա Դ Ա

Կաթ . . . կաթ . . . (Հեղինէ յերաշները երար շաբնելով և ար-
տաստելով իւրինաց) Ահ, Երկինք, միթէ առանձին և ո՛չ-սի-
րելիի մը բազկացը մէջ սիրտի մեռնիմ, . . . սիրտս . . . վայ-
ինձ . . . (Այսնայ այսուիք իւր Հայ: և իւր մանեկ ներս Փառանցէ)

ՑԵՍԵՐԱՆ Գ

ՈՂԻՄ ՊԻԱԴԱ ԵՒ ՓԱԹԱՆՁԵՄ

ՓԱՌԱՆՁԵՄ

ՈՂԵՌԱԾ, ՀՖԵՌԱԾ . . . ՀԵՌ, ՀԵՌ, ԿԱ ՔՆԱՆԱՅ . . .

ՈՂԻՄ ՊԻԱԴԱ

(ՏԵՂԻ ցառութելով) ԱՇ դաւաճան . . .

ՓԱՌԱՆՁԵՄ

Լոէ՛, ձայնդ մի՛ հաներ. մինչև հանել անդամ չկիրնաս. գիտցի՛ր, որ ամենելին օգուտ չփախի ունենայ աղաղակի. ինչու որ արդէն Նեղինէ բռնուած և բանտարկուած է. Արշակ սաստիկ գինովցած՝ գրեթէ անզգայ ինկած է. պալատին պաշտօնեայները իրենց սենեակները քաշուած են, և բոլոր պալատին մէջ միայն իմ բարեկամներս արթուն են. ապա ուրեմն շուտ ըրէ՛, և զինքդ յանձնէ՛ Արահուան :

ՈՂԻՄ ՊԻԱԴԱ

Ուրեմն բաց ականջներդ, Փա՛ռանձեմ, և լոէ՛ Արահուան մօտեցած Ողևմպիագախ խօսքերը, և զարհութէ՛. անօրէն, ի՞նչ զօրաւոր պատճառ ունէիր պյս ոճիրը դործելու . . .

(ԱՆԴՐԱՀԻ հերա իւ բրնէ :)

ՑԵՍԵՐԱՆ Ե

ԱՌՋԻՆԵՐԸ ԵՒ ԱՆԴՈՎԿ

ԱՆ Դ Ա Վ Կ

(ԱՌՋԱՐԱՐԱՆՈՒ) Փա՛ռանձեմ, Փա՛ռանձեմ . . .

ՓԱՌԱՆՉԵՍ

Հոգու . . .

ՈՂԻՄ ՊԻԱԳԱ

(Ա'ԵՅՆ) ՚Ի սէրն Աստուծց, կաթիլ մը ջուր . . .

ԱՆԴՈՎԿ

Ը մւտ, Փառանձեմ, հեռանանք ասկէց, և պատճառը կ'ի-
մանաս . . . (Ա'ԵՐԵԱՆ ԵՐՔՈՒԹԻՒՆ աԼ)

ՈՂԻՄ ՊԻԱԳԱ

(ԽՈՒՄՈՐ ԲՈՋԵՐ ՅԱյնով) ՚Ի սէրն Երկնից, օդնութեան հասէ՛ք . . .

ԴՐԻՄ ՍԷԿՆ

Ողեմզիադաի ձայնն է, այս', այս', այս' . (Ա՛Յ ՀՊՆԵՆ ԱՌԵՎԻ, ԴՄ-
ՔՈՆԿԻՄԱՆ և պահապահ +)

ՑԵՍԱՐԱՆ ՎԵՐՁԻՆ

ՈՎԻՄՊԱՏԱՆ ԱՐՃԱԿ ՊԱՇՕՆԱԿԱՎՔ ԵՒ ՊԱՀԵՎԱՆՔ

ԱՐԾԱԿ

Ի՞նչ պիտի ըլլայ այս . . . Ողեմզիադա . Ի՞նչ պատ-
ճառ ստիպած է զընկ այսպիսի կերպով բոլոր արքունիքը վեր-
դովելու . ելի՛ր ոտքի, և պատասխանէ՛ ինձ . ո՞ւր է Նեղինէ . . .

ՈՂԻՄ ՊԻԱԳԱ

ՈԽՈՆԱՎՈՐՈՒԱԾ ԻՄ, տէ՛ր իմ. կաթիլ մը ջուր, և ապա լոտ-
ցէ՛, որչափ որ կ'ուղես . . .

ԱՐԾԱԿ

ԺԱՌՆԱԼՈՐՈՇՄԱԾ . . .

ՊԱՇՏՕՆԱԿԱԼՔ

ԺԱՌՆԱԼՈՐՈՇՄԱԾ . . .

ԱՐԾԱԿ

(ՀԱՌԵՋԱԲՈՐՅԱ ԲԱՂԵՄԱԳՐ ԹԵՂ ԱՎԱՆԵԼՇԴ) ԽՈՍՀ՝ ՈՂԻՄԱՎԻԱՂՄ
ԹԵՂ ԹԱՆԱԼՈՐԵԿ զըքեղ . . . (ԱՎԱՐԱՆԱԿԱՑԵՐԵՆ ԹԵՂ ԶԵՐ. Ի՛ՄՊԱՅ
ՈՒԵՋԱԲՈՐՅԱ)

ԱՂԻՄՊԻԱԼԴԱ

(ԳՐ-ԷՐ ԷՐ ԽԵՇ և ՊՐԻ է ԷՆԵԼՔ) Հիմա լուցէ՛ք ինձ, տե՛ր իմ,
և Ճանչցի՛ք զիս . . . Երկար ժամանակէ ՚ի վեր՝ արքունեաց մեջ
ձեր խիստ սիրելին ինձի դէմ թշնամացած ըլլալով՝ կորսնցուցած
էր իր երջանկութիւնը. Ես նկատեցի զինքը. Ես աեսայ իր խոր-
հուբեղ . . . այս՝ յստակ կը կարդայի անոր Ճակտին վրայ իր
դիտաւորութիւնը . . . տէ՛ք իմ, նստեցուցէ՛ք զիս . . . աղիքներս
կը կորտին . . . չե՛, ալ չե՛մ գիմանար . . . Վահը կը վինտուեմ
Ես. այն զիս կը վինտու . . . հօս, հօս, հօս եմ . . . եկաւ, ե-
կաւ . . . ողջամբ մնաք . . . զիս իմ հայրենիքս խրկեցէ՛ք . . . հօն,
հօն թռղ թաղուիմ . . . ողջամբ մնա՛, Յո՛ւնաստան . . .
ողջամբ մնա՛ . . . (Աը մեռնի, և մհացածները ամենին մէին դլան-
նին էլ ժամեն, ու վորագոյք էլ դոցուի)

ԱՆ Բ Զ *

* Հիմակուընէ կը յայտնեմ ընթերցողաց, որ ԱՐԾԱԿ Բ սղբերգու-
թեանտ մեջ պիտի տեսնուի անօրէն քահանայի մը ըստա եղեւնա-
գործութեանը համար ընդունած զարհութելի պատիժը.



Ալ ինդրուի, որ չետեւեալ նամակը մեր ամսագրոյն մէջ հրա-
տարակեալք . մենք ալ ի տետրակնուս մէջ լրած մեր խոստմանը
համեմատ՝ անոր հրատարակումը պարտաւորուած ենք ընելու :

Արդոյ Հեղինակ եւ Տնօրին Պուսպի Մասեաց պատուական ամսագրոյն :

Չեր պատուական ամսագրոյն ի տետրին վերջերը նամակ մը
կարդացեր էինք Օ միւռնիսյէն իրկուած . նցն նամակին յարդց
հեղինակը Եւրոպական Եշկեղեցեաց յատկացեալ Երգեհոնը՝
Մեր Հայկական Եշկեղեցիներուն մէջն ալ գործածելու առա-
ջարկութիւն մը ըրեր էր՝ միանդամ փափաքելով . և այս բա-
նիս համար զգին դիտաւորութիւնը իմանալու կ'սպասէր :

Չենք դիտեր, թէ ազգը մինչեւ հիմա ի՞նչ պատասխա-
ներ է . և կամ թէ ի՞նչպէս պիտի տնօրինէ . ձեր խոստ-
մանը համեմատ՝ մենք միայն այս մասին ունեցած գաղափարնիս
յայտնելու պարտաւորուելով՝ ահա յետագայ յօգուածս առ
ձեզ կը յուղարկեմ իրը պատասխանատուութիւն այն առաջար-
կութեանը . յուսալով որ՝ եթէ ձեր աղնուութիւնը բարեհաճի,
զայն ձեր աղգօգուտ ամսագրոյն յառաջիկայ Տետրին մէկ փոքր
մասը զոհելով կը հրատարակէ :

1858 Յուլիս 15

Վակէ քանի մը ամիս առաջ աղգային լրագիրներու միջոցաւ մեր
Եշկեղեցական Երաժշտութեանը վրայօք առաջարկութիւն մը
Եղեր էր Օ միւռնացի Յարդց Կոստանդեան Գալուստ աղային
ստորագրութեամբը, ինչպէս բոլոր աղգայնոց արդէն յայտնի է :
Եւ այն ատենէն իվեր թէ աղգիս երկու գերագցն ժողովերէն և
թէ հասարակութեան կողմէն սասափիկ լրութիւն մը տեսնուե-
լով՝ համուզուեր էինք, թէ այս ինդիրը իրօք մերժուեցաւ :

Վակայն՝ հիմա կը լսենք, որ այն առաջարկութիւնը ընող
Յարդց անձը իր քանի մը բարեկամներովը հանգերձ կ'աշխա-
տի Եղեր Օ միւռնիսյ մէջ այս բանը գլուխ հանելու՝ որ է Հայ
Եշկեղեցիներուն մէջ Երգեհոնի գործածութիւնը, իբր զի Աշ-
քիս հողմանէ ընդհանուր լրութեան նը բեսնելով (որ համար նեան
նշան է) Եղեր . ու անով քաջալերուեր են . բարի՛ և շատ աղէէ :

Իսյց նախ՝ այն աղգային ընդհանուր լըութիւն ըսուածը մենք
ինչու չսեսանք ու ըլսեցինք . Երբ կամ ուր . ըսենք թէ կայ
և կամ մասնաւոր տեղեր Եղեր է . ի՞նչ կը կը անանկով գոր-
ծը իր ուղիղ լնթացքը կը գանէ՛, անով Երգեհոնը Եշկեղե-

Ներում մէջ գրուելով՝ ինքնիրեն իր Եւրոպական դարձուածքներով մեր Հայկական երգերու չետ կրնայ համաձայնիլ, ու այնպէս (. . . .) կէտերուն մէջէն լսուած յայներով շարունակուած մէր Երեղեցական առաւանուը կ'անհետանայ ոչ երբէք. այլ առաւել գէշ, առելի անհամ և խառնաշփոթ ձայներ լսուելով, ան ատեն (Առաւած ճեւք աբանց) Հրէից Վինակական դարձած՝ այն հին աւուրց Հայկական երգերու ականչնին վարժած բարեպաշտ ժողովուրդը խրտելով, շիօմելով կը պարտաւորին Եկեղեցիներէն դուրս փախչելու :

Երկրորդ՝ այս առաջարկութիւնը ընող բարեւէր անձը կարելի է թէ՛ բոլոր ուսմանց և արհեստից կատարելութիւնը ստացած ըլլայ, բայց կ'երեկի թէ այս մասին՝ այսինքն Երաժշտութեան արհետան տեղեկութիւն մը չէ ունեցած. վասն զի եթէ փոքր ինչ տեղեկացած ըլլար՝ այսպիսի ըլլալու և դժար խնդրոյ մը ոչ ինքը կը համոզուեր, և ոչ աշ ընդհանուր ազգ մը համոզելու համար՝ Հայ մանկաց բերնէն. առած. Ի՞նչ էւլոյ ունեւ աւ Երեղեցին Երբեհն գործածեն+ գոհանակ ձնծլայ՝ ըսելու կը համարձակէր :

Աղէկ գիտնար նաև թէ՛ ի՞նչ տարբերութիւն և ո՞քափ անհամաձայնութիւններ կան Երեւեան և Երևմտեան եղանակներու և դարձուածքներուն մէջ տեղը, (մանաւանդ Եկեղեցական ասմանց) կարծեմ չէր կընար ազգին դէմ դանդաստելով լսել թէ՛ ասոր պատճառը մէստան հաւանաբնիւան պահանջնեննէ :

Իրաւամի՛ այս “ Վինաբան հաւանութեան պակսութիւնը ” ազգիս ընդհանուրին օգտաւէտ՝ ուրիշ շատ բաներու վրայ կրնար ցըցնելու և գանգատելու. ինչպէս Վայրաբաղաքիս մէջ կանոնաւոր ընդհանուր ուսումնաբան մը չունենալիու համար. որով անկարող ընտանեաց զաւակը հոն ամենայն կերպով ձրի հոգացուելով՝ օր մը իրենց պիտոյ եղած ապրուստը ճարէին. նաև ազգերնուու դեռ թանձը տիտութիւննեան խաւարին մէջ տապալող մասը անով օր մը յանկարծ պիտի փայլէր :

Կրնար ցըցնելու՝ մինչև ցայսօր լաւ կերպով ազգանց դպրոց մը չիբայցուելուն համար. որմէ պիտի ելլէին՝ քաղաքավար, բարեկիրթ, համբերող, աշխատասէր, ուսումնասէր, արհետաւոր, բարեսիրտ և ազնիւ օրիորդներ. որոնք ազապ եղած առեննին իրենց չքաւոր ծնողացը օգտակար, ամուսնացեալ ժամանակնին՝ իրենց ամուսնացելցն լանիւ և գործով օգնական պիտի ըլլային . . . :

Դիեւ ևս անանկ բաներու համար յայտնի կրնար “Ո՞յսա-
քան հաւանութեան պակսութիւնն է” ըսելու, որոնցմով ժամա-
նակին Հայոց ազգս ալ ուրիշ լուսաւորեալ ազգերուն դիմա-
ցը արեու պէս պիտի փայլէր բայց Հայոց Խկնղեցիներուն
մէջ Երգեհոն գործածուելու մասին ոչ երբէք :

Ալովիչեաւ այնպիսի ծանր պարագաներ առջել կայ որ՝
գործը հարկաւ անկարելիութեան մէջ պիտի ձգէ : Խնչպէս
ազգիս մէջ գտնուած քանի մը Երաժշութեան արջես-
տին հմուտ և ճիշտ տեղեկութիւն ունեցող Յարդի անձինք ալ
աղէկ գիտեն և կը հաստատեն թէ աս բանիս մէջ ի՞նչ և
որչափ անելանելի գժարութիւններ կայ . ըլլայ ալ նէ՝ ի՞նչ բա-
ներու և որչափ ժամանակի կարօտ է մեր Հայկական հին ա-
ւորց եղանակները փոխելով կամ հարկաւ այլայլելով՝ Եր-
գեհոնին դարձուածքներուն համաձայնեցընելու համար :

Կաև աս ալ յայտնի է որ Երգեհոնը մեր Եկեղեցինե-
րուն թէ ձեին և թէ արարողութեանը յարմարցընելու համար՝
ի՞նչ կերպ և որպիսի փոփոխութիւններ պէտք է որ ըլլայ .
Վերջապէս այս բանը իր կատարելութիւնը գտնելու համար Ե-
կեղեցիները որչափ նիւթական ծախքերէ պիտի ելլին . թո-
ղընք այլ և այլ բարցական վնասները . . . : Ա երջին շա-
հը, կամ օգնուածը . . . ան չեմ գիտեր, միայն թէ ներկան և
ապագան կը յայտնէ :

Ուրեմն ասանկ ներկային և ապագային անվերջանալի
գժարութիւններ յարուցանելու ինդիրը մէկդի ձգելով՝ ինդ-
րեմ մեր Յարդց ազգասէր աղայէն, որ բարեհաճի ինքն և
ուրիշներն ալ յորդորելով՝ այսօրուան գտնուած մեր Կախնա-
կան եղանակներուն (որն որ խանդարուած է) կարգի կանոնի
մը տակ մանելուն նպատակաւ՝ ազգիս երկու գերագցն ժո-
ղովներէն մասնաւորապէս ինդրուի . ու այնպէս օր աւուր մտած
ոչ Եւրոպական և ոչ ալ Հայկական եղանակները անչե-
տանան :

Եյս առթովս նաև կը յիշեցընեմ մեր բարեկամին, եթէ
կը փափաքի որ ազգերնուս ընդհանուր հասարակութեան բա-
նով մը օգուտ ըլլայ, ահա մարդկային սիրալիր ընկերութեա-
նը նպաստող, և անոր մտաց լուսաւորութիւնը փայլեցընող
կանոնաւոր կերպերով թատերական խաղարկութիւնը . որմէ
բոլոր Եւրոպից ամեն վիճակի տէր ժողովուրդ անոր սրա-
շարժ և ողբայի տեսաբաններէն անհամար նիւթական և բա-

բցական հարստութիւններ քաղցըն և գեռ քաղցլու վրայ են.
ուստի աշա խնդիր, և ահա առաջարիութիւն :

Բայց մենք, չպարագանք, ի՞նչ կընենք . . . ո՞չ . պարագ
յցակը ժամանակ կորսնցընելէն ուրիշ բաներու չենք ծա-
ռայեցըներ մեր յիշութիւնը, մեր ազգասիրութիւնը, մեր ե-
ռանդը, մեր աշխատութիւնը և մեր նիւթական ստացուած-
քը: Եւ . . .

Ահա ստուգիւ և իրաւամբ “Միաբան հաւանութեան
պակսութիւն:”

Քանի՞ ք մնի՞ անդամ այսպիսի ազգօգուտ բանի մը հա-
մար բանիւ և գործով չաշխատուեցաւ, որքան գրով և խօս-
քով յայտարարութիւններ չեղաւ, ասոր ճշմարիս օգուտնե-
րը ճանցող մասնաւոր անձինք որչափ ջանացին այս շահաւետ
գործը կերպով մը ազգիս մէջ ծաւալեցընելըւ: Ահա արիւն
քրտինք կը թափէ Մուսայք Մասեաց ամսագրին հեղի-
նակը, լրագրերով, տեամսերով կաղաղակէ կը պաշա-
տի աղնիւ և սրաշաշարժ Ողբերգութիւններ յօրինելով, յոր-
դորական և շարժառիմ յօդուածներ հրատարակելով, կար-
ծես թէ իր երիտասարդութեան փայլուն ծաղկեները ոյս բա-
նիս վրայ պիտի վրձացնէ . բայց ափսո՞ . . . որ “ ինքը մի-
ակ է”, և փուծ աշխատանք, քանի որ այս վիճակին մէջ
պիտի մնայ:

Չիմունանք նաև Օմիւնացի Ա անանդեցեան Յար-
գոյ Մարգիս աղային բաղում աշխատութեամբ ’ի լցո ընծայ-
ած և գեռ ընծայելիք պատուական ողբերգութիւնները. և
Պօլսոյ մէջ բաժանորդութեամբ թատերական ընկերութիւն
մը հաստաելու համար՝ եղօգը Յարգամեծար Յովշաննէս
աղային և ուրիշ բնկերի մը հետ ըրած ջանքերը . բայց ’ի
զուր՝ . . . պատճառ. ահա առաջն և վերջին պատճառ հա-
մարուած է, “Միաբան հաւանութեան պակսութիւնը”:

Ուրիմն՝ հոս մէնք ալ մեր գրուածը համառօտելու հա-
մար՝ առայժմ բաւական համարինք այս ըրած քանի մը յօր-
դորական խօսքերնիւթէ Երգեհօնի ինդրոյն վրայօք, և թէ
թատրերգութեան մասին. որոնց համար ուրիշ անդամ մաս-
նաւոր առիմ պիտի ունենամք խօսելու: